




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13202

Ս. ՏՈՒՅԼՍԿԻ

308(51.8)

S-71

Մ Ա Ն Զ Ո Ւ Ր Ի Ա

ՔԱՐԳՍ. ԱՎ. ՇԱԹԻՐՅԱՆ
ԽՄԲ. ~~ՇԱԹԻՐՅԱՆ~~

ԴԵՏԶՐԱՏ
ՌԱԶՄԱՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1932

U. 244-3104

Ա. ՏՈՒՅԼՍԿԻ

25 SEP 2006

1 DEC 2009

308(51.8)

S-71

42

ሆ ሀ ኒ ደ በ ኮ ቦ ኮ ሀ

ԹԱՐԳՄ. ԱՎ. ՇԱԹԻՐՅԱՆ
ԽՄԲ. Գ. ~~ՊԱՆՈՍՅԱՆ~~

$$\begin{array}{r} 1008 \\ \hline 34400 \end{array}$$

ՊԵՏՎՐԱՏ
ՌԱԶՄԱՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ



ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Մանջուրիան միացնում է Չինաստանի յերեք նահանգները՝ Լյաոնինի (նախկին Մուկդենի), Գիրինի և Սեյլունցյանի, և վորին չինացիներն անվանում են «Յերեք արեւլյան նահանգներ»։ Սեյլունցյանի նահանգի կազմի մեջ մտնում են «Բարգա» մարզը, վորը ընակեցրած է գլխավորապես մոնղոլ-բուդիստներով։ Այս մարզը սահմանակից է մեր Անդրադիային։ Լյաոնինի նահանգի ամենահարավային մասը (Լյաոլանի թերակղզին) հայտնի չէ Կվենտունի մարզ անունով, վորը յերկարամյա վարձակալության իրավունքներով (99 տարի) պատկանում է Ճապոնիային։

Մանջուրյան արեւելքից, արեւմուտքից և հարավից սահմանակից է ՍՍՀՄ-ին, ընդ վորում նրա սահմանները կազմում են Ուսսուրի, Ամուր և Արզուն գետերը, իսկ արեւելքից Սանկա լճից մինչև Տումինցյան գետի բերանը՝ «Սահմանային» լեռնաշղթան։ Արեւմուտքից Մանջուրիային սահմանակից են նաև Արտաքին Մոնղոլիայի (այժմ Մոնղոլական Ժողովրդական հանրապետութիւնը) և ներքին Մոնղոլիայի (Ֆեյսե) տերիտորիաները։ Վերջինի մի մասը մտնում է Մանջուրիայի Լյաոնինի նահանգի կազմի մեջ։

Հարավից Մանջուրիան սահմանակից է մասամբ Կորեային, իսկ մասամբ եւ ծովային սահման ունի (Դեղին ծով)։

Մանջուրիային սովորաբար բաժանում են յերկու մասի՝ Հյուսիսային, վորն ամփոփում է իր մեջ Գիրինի և Սեյլունցյանի նահանգները և Հարավային՝ Լյաոնինի նահանգը։ Հյուսիսային Մանջուրիան տնտեսական տեսակետից ձգվում է գեպի Չին-Արեւելյան յերկաթուղին, իսկ Հարավայինը՝ գեպի Հարավ-Մանջուրական յերկաթուղին, վորը պատկանում է Ճապոնիային։

Լյաոնինի նահանգը ունի մոտ 235 հազար քառ. կմ. Գիրինինը 282 հազար քառ. կմ., Սեյլունցյանինը 680 հազար քառ. կմ. տարածութիւն Մանջուրիայի ամբողջ տարածութիւնը հավասար է 1200 հազար քառ. կմ. և համարյա յերկու անգամ ընդարձակ է Ճապոնիայի տարածութիւնից, վորը բոնում է 675, 2 քառ. կմ.։

Մակերևույթի կազմութիւնը

Մանջուրիան ընդհանրապես լեռնային յերկիր է։ Լեռները, վորոնք ծածկված են համարյա կուսական անտառներով, բոնում են նրա ամբողջ հյուսիսային, արեւլյան և արեւմտյան մասերը։ Յերկրի կետրոնում, լեռներով չըջապատված, ընկած է պտղաբեր հարթավայրը (դաշտավայրը)՝ Մանջուրիայի հացահատիկի չտեմարանը։ Այս դաշտավայրը վրոգրված է Մանջուրիայի գլխավոր գետերով՝ Սունգարի (Ամուրի վտակը), Նոննի (Սունգարի վտակը) և Լյաոխե։

Մանջուրիա I մ.։

Լեռները: Յերկրի գլխավոր լեռնային սխտեմն են Չանրալանի լեռնաշղթաները, վորոնք իրենց լեռներով և լեռնային ճյուղավորումներով լցնում են Մանջուրիայի արևելյան և հարավ-արևելյան մասերը: Այդ սխտեմնի հանդուլն է Բալտուստան լեռը, վորը գտնվում է Գիրինի գավառի հարավային կողմը, նրա և կորեայի սահմանների մոտ: Այս լեռան փլշերից են սկիզբ առնում Սունգարի, Յալուցյան (Յալու) և ուրիշ գետեր:

Չանրալանի կենտրոնական հիմնական լեռնաշղթաներն են հանդիսանում այն հզոր լեռնաշղթաները, վորոնք գնում են Բալտուստանից դեպի արևմուտք և իրեն անջրպետ են ծառայում Սունգարի և Լյաոխե գետերի համար: Չանրալանի հարավ-արևմտյան ճյուղավորութունները լցնում են հարավային Մանջուրիան՝ Հարավ-Մանջուրական յերկաթուղուց դեպի արևելք: Հարավում նրանք վեր են ածվում և դառնում Լյաո-ուդան թերակղզու սարահարթը:

Բալտուստանից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք գնում են Չանրալանի մի շարք ճյուղավորութունները: Այդ լեռնային ճյուղավորութունները կարում են Չին-արևելյան յերկաթուղին և անջրպետ հանդիսանում Սունգարի և Ուսսուրի գետերի փոակներին համար: Այդ լեռնաշղթաներից մեկը—Կենտյ Ալին—իր առանձին վիճ մեծ ճյուղավորութուններով լցնում է Սունգարի, Ամուրի և Ուսսուրի ստորին հոսանքի միջին տարածութունը:

Չանրալանի բոլոր լեռները և լեռնային ճյուղավորութունները ծածկված են խիտ անտառներով:

Այսպիսով Մանջուրիայի ամբողջ արևելյան և հարավ-արևելյան մասը սկսած իսանկա յճից մինչև Լյաոնգանի թերակղզին՝ ներկայացնում է խիտ կտրտված լեռնաանտառային մի յերկիր: Նրա առանձին կետերը գտնվում են ծովի մակերևույթից 2½ հազար մետրից ավելի բարձրության վրա: Չինացիք Մանջուրիայի այս մասն անվանում են «Արևելյան սարահարթ» կամ «Արևելյան լեռնային յերկիր»: Վրչ մեծ հարթ հողամասեր պատահում են միայն Մոդանցյան, Մույինխե և Տուսինցյան գլխավոր գետերի և նրանց փոակների յերկարությամբ: Այդ լեռների հովիտներն ավելի խիտ են բնակեցված և ավելի լավ մշակված: Յերկիրն ունի փոքր քանակությամբ հողուղիներ:

Մանջուրիայի արևմտյան և հյուսիսային մասը ծածկված են մեծ իննգան լեռնաշղթայի անտառոտ լեռներով և լեռնային ճյուղավորութուններով: Այս լեռնաշղթան, վոր ունի մինչև 1400 կմ յերկարութուն և մոտ 400 կմ յալսութուն, իրենից ներկայացնում է լեռնային շղթայի հիմնական ստակը, վորը ձուլում է Չինաստանից դեպի հյուսիս մինչև Ամուր գետը: Ամուրի մոտ մեծ իննգանը միանում է Թյաուրի Ալին և փոքր խինգան լեռնաշղթաներն, վորոնք հանդիսանալով Մեծ իննգանի ճյուղավորութունները, ձգվում են դեպի հարավ-արևելք և գնում համարյա գոլգահեռ Ամուր գետին, բաժանելով նրա ավազանը Սունգարի և Նոննի գետերի ավազանից:

Դեպի արևելք՝ Մեծ իննգանը բալականին խիտ և յերկար թերությամբ իջնում է դեպի Նոննի հովիտը: Իսկ արևմուտքից նա ներկայացնում է Բարդինի, կամ այսպես կոչված Սուանբուրի սարահարթի բարձ-

րացած ծայրամասը, վորը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 600 մ. բարձրության վրա:

Մեծ իննգանի վրայով անցնում են մի շարք հողուղիներ, վորոնք Նոննի հովիտը կապում են Բարդայի հետ: Այս ճանապարհներն առանձին մասերում իրենցից ներկայացնում են լեռնային կածաններ, վորոնցով դժվար են անցնում նույնիսկ չինական թեթև սայլերը: Ավելի լավ ճանապարհները գնում են Չին-արևելյան յերկաթուղու յերկարությամբ (այսպես կոչված իսայլար-Յիցիկարի տրակտ):

Իլխուրի-Ալին լեռնաշղթան ավելի վայրի և անմատչելի լեռնային հանդուլն է: Նրա վրայով անցնում է միայն մեկ լեռնային ճանապարհ, վորը Վերին Ամուրի հովիտը կապում է Նոննի հովիտի հետ: Փոքր իննգան լեռնաշղթան ունի ավելի մեղմ ուղիղներ և ավելի քիչ անտառոտ և քան Մեծ իննգանը և Իլխուրի-Ալին լեռնաշղթան: Նրան կարում են գլխավոր հողուղիները Ամուր գետից մինչև Մանջուրիայի խորքերը (Սուխայան-Յիցիկար տրակտ):

Իլխուրի-Ալինի և Փոքր իննգանի դեպի ամուր ուղղված հյուսիսային թեթևութունները կապում են ընդարձակ լեռնա-անտառոտ յերկիր, վորը սահմանակից է Ամուրի վերին և միջին հոսանքներին ամբողջ տարածությամբ, սկսած Շիլիկ և Արդունի միախառնվելու տեղից, մինչև Սունգարի գետաբերանը: Այս յերկրում բնակչութունն ավելի քիչ է և կոչվում է «Չինական մերձամուրյան չրջան»: Նրա անտեսական դյաշը կենտրոնացած է գլխավորապես Ամուր գետի հովտում, վորի 30 կիլոմետրանոց շերտը մաքրված է անտառից և մասամբ ուղտադործվում է ցանցակրի համար:

Գաշտավայրերը.—Մանջուրիայի հարթ տարածութունները բլրում են նրա ամբողջ մակերևույթի համարյա կեսը: Յերկրի կենտրոնում գտնվում մե, այսպես կոչված Մանջուրական կամ Սունգարական դաշտավայրը, վորը բռնում է մոտավորապես 450—500 հազար քառակուսի կիլոմետր տարածութուն և լրնկած է Սունգարի, Նոննի գետերի և Լյաոխե գետի վերին ավազանի միջև: Մեծ իննգանից դեպի արևմուտք ընկած է Բարդինյան հարթավայրը: Այս դաշտավայրերը թմբավորված են դառիվայր և թեք բլրակներով ու թմբերով ու համարյա զուրկ են անտառներից. կան միայն պուրակներ և անտառամասեր: Տեղ-տեղ (Չին-արևելյան յերկաթուղուց դեպի հարավ Նոննի և Սունգարի ստորին հոսանքում) պատահում են աղուտներով, լինչպես նաև աղոտ և սոդոտ լճերով ու ճահճներով վրչ մեծ տարածութուններ: Լեռնաշղթաների մոտ դաշտավայրերն աստիճանաբար բարձրանում են և դառնում նրանց սարահարթերը:

Գաշտավայրերն ունեն հողուղիների խիտ ցանց, վորոնց մի մասը հարմարեցրած է նաև ավտոմոբիլային յերթեկեկության համար: Հարթավայրերում և կենտրոնացած Մանջուրիայի գյուղական բնակչության հիմնական մասան, հետևաբար և յերկրի հողադործական հարստութունները:

Անտառները.—Անտառները բռնում են Մանջուրիայի հսկայական տարածությունները: Չնայած, վոր վերջին 30—40 տարվա ընթացքում անտառները խոշոր չափերով կտրվում էին, այնուամենայնիվ յերկրը դեռ հարուստ է շինարարությամբ:

Անտառների ընդհանուր տարածությունը, և շինարարական բնափայտի մոտավոր պաշարներն ըստ Մանջուրիայի նահանգների՝ յերևում են հետևյալ թվերից.

ԳԱՎԱՌԻ ԱՆՈՒՆԸ	Անտառների տարածությունը 1000 ք. կմ	Ընդհ. տարածությունը	Շին. բնափայտի պաշարները (միլիարդ կուբաֆուտով)
Խեյլանցզյանի	189	27—28 ⁰ / ₀	56,6
Գիրինի	86	30 ⁰ / ₀	29,6
Լյաունինի	15	6.5 ⁰ / ₀	6,6
Ընդամենը	290	24 ⁰ / ₀	32,8

Այսպիսով անտառների ամենամեծ տարածությունն ընկնում է խեյլանցզյանի նահանգի վրա, ամենաքիչ անտառ կա Լյաունինի նահանգում, վորտեղ նրանք կտրվեցին այդ նահանգի արագ բնակեցման հետևանքով:

Անտառները լայն չեքոտով ձգվում են Շիլիի և Արգունի գետերի միախառնվելու տեղից դեպի հարավ-արևելք (Ամուրին զուգահեռ), դեպի Սունգարի և Յալուցզյանի ակունքները: Այստեղ այս չեքոտը խառնվում է Կորեայի անտառների հետ: Հյուսիսում և արևելքում անտառները ծածկում են Իլխարի-Ալինի և Փոքր Ուինգանի լեռնաշղթաները և Չանբա-չանի սիստեմի լեռները: Արևմուտքում անտառները ծածկում են Մեծ Ուինգանի լեռնաշղթան և ձգվում լայն չեքոտով, վորն սկսվում է մոտավորապես Տորգու գետի (Նոնի աջ վտակը) շրջանում և վերջանում է Ամուրի մոտ:

Սունգարի գետի անտառազուրկ հովիտը, անտառային զանգվածները բաժանում է յերկու մասի. 1) խեյլանցզյանի նահանգի, և 2) Գիրինի նահանգի անտառներ:

Լեռներում, գետերի ակունքները մոտ, վերին հոսանքում անտառներն ունեն տալգայի բնույթ և միայն լեռների, լեռնային ճյուղավորությունների իջնելու հետ նորանում են և աստիճանաբար անհետանում:

Մանջուրիայի արևմուտքում և հյուսիս-արևմուտքում անտառային ծառերից գերակշռում են սաղարթավորները (մանջուրական իճատերե տեսակը), մոտավորապես 70—80 %, արևելքում—յեղենին, մայրին:

Ավելի պակաս մատչելի անտառներ են Չանբաչան լեռնաշղթան ծածկող անտառները. նրանք ունին խիտ մանրածառ անտառ և մացառներով ու թփուտներով ծածկված տեղեր: Մանջուրական անտառների զգալի ամրամտելիությունը ստացված է հողի ճահճոտության, հաճախ տորֆոտեթյան պատճառով:

Չին-արեկյան և ուրիշ յերկաթուղիների գոտում անտառները համարյա կտրված են:

Գետերը.—Յերկրի գլխավոր գետերն են Սունգարին և Լյաոխեն:

Սունգարի գետն իր վտակներով վտուգում է Հյուսիսային Մանջուրիայի տարածության համարյա յերեք քառորդը: Լյաոխե գետն անցնում է Հարավային Մանջուրիայի ստորագետեր և մշակված հարթավայրով:

Ամուր գետը և նրա աջ վտակները—Արգունը և Ուսսարին, հանդիսանում են սահմանային գետեր խՍՀՄ-ի և Մանջուրիայի միջև: Միայն Արգուն գետը իր վերին հոսանքում անցնում է Բարգի տերիտորիայով և կոչվում է Ուսսար-խե:

Գետի ընդհանուր յերկարությունն է 1800 կմ. նավագնաց և իր միջին և ստորին հոսանքներում, սկսած Գիրին քաղաքից: Նավագնացությունը զգալիորեն անցնում է գետի հունի փոփոխականությամբ և վտանգավոր ավազակույտերի պատճառով, վորոնք պատահում են այն տեղերում, վորտեղ գետը կտրվում է լեռների ճյուղավորություններով: Հատկապես զգալի է Մանիխական ավազակույթը, վորն ընկած է Մուդանցզյանի գետաբերանին (Սանին քաղաքի մոտ):

Սունգարի գետի ավելի նշանակալի վտակն է Նոնի գետը (Նունց-յան)—ձախ վտակը, վորն ունի մոտ 900 կմ. յերկարություն: Նոնին իր սկիզբն է առնում Իլխարի-Ալին լեռնաշղթայից և իր վտակների հետ միասին վտուգում է Սունգարական հարթավայրի արևմտյան մասը: Աջ վտակներից անհրաժեշտ է նշել Մուդանցզյան գետը, մոտ 500 կմ. յերկարությամբ, վորը սկիզբ է առնում Չանբաչան լեռներից: Նոնի գետը նավագնաց և բավականին տարածված վրա (Յիցիկարից մինչև գետաբերանը): Մուդանցզյանը նավարկելի գետ է, մատչելի յե միայն մանր նավերի համար:

Լյաոխե—յերկարությունը մոտ 2000 կմ. է: Սկիզբ է առնում Մոն-յուիայի հարթավայրերի լճերից և մտնում է Հարավային Մանջուրիայի սահմանները Տունլյաո-Չինցզյատուն յերկաթուղային գծի մոտ. թափվում է Լյաոդունի ծովածոցն Ինկուույի մոտ: Լյաոխեն նավարկելի յե 800 կմ. տարածության վրա:

Մանջուրիայի մյուս գետերից հարկավոր է նշել Ուսսար-խեն: Նա, ինչպես արդեն ասացինք, իրենից ներկայացնում է Արգուն գետի վերին

Հոսանքը (ակունքից մինչև Արագածաշունչի սահմանային գյուղակ, ընդամենը մոտ 320 կմ.) : Սալլար-խեն սկիզբն է առնում Մեծ Նինգանից և իր վտակների հետ վտոգում է Բարդուն : Տումենցղյանը (Տումին-Լա) և Յալուցղյանը սահմանային գետեր են Մանջուրիայի և Կորեայի միջև : Ի վերջո հարկավոր է մատնանշել Արգունի յերեք աջ վտակները—Գան, Դերբուլ և Սաուլ գետերը, վերջին հոսում են Բարգի Հյուսիսային մասից և վտոգում «Տըյոխընչյա» շրջանը, վերը բնակեցրած է ուսու վտարան-դիններով :

Մանջուրիայի գետերի բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր նրանք վարարում են յերկու անգամ—գարնանը, յերբ ջրի մակերևույթը բարձրանում է աննշան չափով և ամրանը (հուլիս-ոգոստոս), յերբ մեծ հեղեղներ են լինում և գետերը սաստիկ վարարում են : Սա բացատրվում է նրանով, վոր ձմեռը Մանջուրիայում քիչ ձյուն է գալիս և գարնանը՝ ձյունի հալչելուց քիչ ձյուն է լինում : Ամրան հեղեղումներն առաջ են պալիս հուլիս-ոգոստոս ամիսներին յեկած առատ անձրևներից և լեռնաշղթաների բարձր լեռների դադաթների ձյան հալչելուց :

Գետերի մի ուրիշ առանձնահատկությունն էլ այն է, վոր նրանք համարյա բոլորն էլ պատկանում են լեռնային գետերին և ունեն արագ ընթացք, վորոքապտույտ հուն, քարքարոտ հատակ, հաճախ նեղ հովիտներ, սեղմված լեռներով և ափերը ծածկված են թփերով ու մացառեն-բով : Մշտական կամուրջներ չառ գետեր բոլորովին չունեն, բացի յերկաթուղու կամուրջներից (Սունգարի, Նոնի, Լյաոխանի և ուրիշների) : Գետերի վրայով, մեծ մասամբ, անցնում են ծանծաղուտներով կամ թե լպստերով :

Գետերը բացվում են ապրիլին և սառչում են հոկտեմբեր-նոյեմբերին :

Լճերը.—Մանջուրիայում լճեր քիչ կան : Նրանց մեծ մասը գրտնվում է Բարգի հարթ մասերում : Այստեղ են գտնվում մեծ, խորը և քաղցր ջուր ունեցող յերկու լիճ՝ Դալայ-Նոր (տարածությունը մինչև 1100 ք. կմ) և Բույի-Նոր (600—700 քառ. կմ) : Նրանք իրար և Արգուն գետի սխտեմի հետ կապված են վտակներով (Ուրչուն գետը և Պլատուր վտակը) : Այդ լճերի շրջանում կան մեծ քանակությամբ աղոտ և սոճոտ լճեր :

Մանջուրիայի Հյուսիսում, մեր Մերձծովյան սահմանի վրա յե գտնվում սակավաջուր Սանկա լիճը, մոտ 4000 քառ. կմ. տարածությամբ : Լճի Հյուսիսային ափը և Հյուսիսային մասը պատկանում է Չինաստանին :

Կլիման.—Գտնվելով միջևում լայնության առտիճանի վրա մեր

Թուրքեստանի, Թյուրքիայի և միջին Իտալիայի հետ, Հյուսիսային Մանջուրիան, իր հարթ մասում (Սունգարական հարթավայրը) ունի ավելի խիստ կլիմա, քան հիշյալ յերկրները : Նրա կլիման ավելի մոտ է Մոսկվայի մարզի, Միջին Վոլգայի և Դանիայի կլիմային : Որեակ՝ Հյուսիսային Մանջուրիայի հարթավայրի միջին ջերմաստիճան հունվարին համապատասխանում է Իրկուտսկի, Արխանգելսկի, Հյուսիսային Ալյասկի ջերմաստիճանին իսկ հուլիսին՝ ջերմաստիճանը մոտ Յակուտսկի, կիևի ջերմաստիճանին : Հյուսիսային Մանջուրիայի ամառային վոչ բարձր ջերմաստիճանը բացատրվում է ամառը փչող հարավ-արևելյան և արևելյան քամիների մեծ խոնավությամբ : Չմեռային ցրտերը սաստկանում են Յակուտսկու սառնամանիքների և մայր ցամաքի չոր քամիների ազդեցությամբ տակ :

Հարավային Մանջուրիան ավելի մեղմ է տաք կլիմա ունի, քան Հյուսիսային Մանջուրիան. նրա վրա ազդում է Կորեական տաք հոսանքը :

Ընդհանրապես Մանջուրիայի կլիման կարելի յե բնորոշել վոչպես ցամաքային՝ ձմեռը և ծովային՝ ամառը :

Հյուսիսային Մանջուրիայում ամենացտաք ամիսը հունիսն է, ամենացուրտը՝ հունվարը. Հարավային Մանջուրիայում համապատասխան կերպով հունիսը և դեկտեմբերը :

Տեղումների բաժանումը՝ թե՛ ըստ տարվա յեղանակների և թե՛ ըստ ամիսների չափազանց անհավասարաչափ է : Տեղումների ամենամեծ քանակությունն ընկնում է ամրանը (հուլիս-ոգոստոս, ամառային անձրևների շրջանը) և շատ քիչ՝ ամրանը : Չմեռը, գարունը և աշունը չոր են, աշունը աչքի յե ընկնում պարզ և համեմատաբար տաք օրերով : Չմեռվանից ամրան անցնելը տարբերվում են անսպասելիությամբ և արագությամբ (կարճ, յերկու շաբաթից մինչև մեկ ամիս, գարուն և աշուն) :

Ընդհանրապես Մանջուրիայի կլիման պետք է համարել առողջ. գյուղատնտեսությունն ապահովված է ամառը բավարար չափով խոնավությամբ և ջերմությամբ :

Հաղորդակցության ցանապարհները

Յերկաթուղիները.—Մանջուրիան Չինաստանի այն մարզն է, վորն ավելի հարուստ է յերկաթուղիներով :

Այն Ժամանակ, յերբ ինքը Չինաստանն իր 4 միլիոն քառ. կմ. ամբողջ տերիտորիայի վրա ունի մոտ 9 հազար կմ. յերկաթուղաղիծ, Մանջուրիան ունենալով 1200 հազար քառ. կմ. տարածություն, ունի մոտ 6900 կմ յերկաթուղաղիծ, վորից մոտ 5800 կմ. գլխավոր դժերն են իսկ 1-100 կմ զանազան փայտաղման մերձարար ճյուղեր, նեղածիլներ և այլն :

Յերկրի ճանապարհների մեծ մասը, բացի Չին-Արևելյան, Հարավ-Մանջուրական և Պեկին-Մուկդենյան յերկաթուղիներից, կառուցված են վերջին տասն տարվա ընթացքում։ Նրանց շինարարությունը համարյա միշտ էլ կատարվել է ճապոնական կապիտալի անմիջական մասնակցությամբ, վորն այդ միջոցով արժատանում էր Մանջուրիայում և նրան սահմանակից Մոնղոլիայի մարզերում, դուրս քաշելով նրանցից հումքերի հարստությունները։ Ճանապարհների մի մասն է միայն սրտահանում մանջուրական կապիտալիստներին, վորոնք ձգտում են, մանավանդ վերջին տարիները, յերկաթուղագծերի ինքնուրույն շինարարությունը։

Մոտ 2300 կմ. յերկաթուղագիծ, այսինքն՝ Մանջուրիայի յերկաթուղագծի ամբողջ ցանցի մոտ 40 % -ը ամբողջովին պատկանում են Ճապոնիային (Հարավ-Մանջուրական յերկաթուղին և ուրիշները), կամ թե կառուցված են նրա դրամով և կառավարվում են նրա մասնակցությամբ, ափելի ճիշտ, նրա վերահսկողությամբ։

Մանջուրիայի բոլոր յերկաթուղիներն ունեն յվարտական ծիր (լայնությունը 1435 մ.) բացի Չին-արևելյան յերկաթուղուց, վորն ունի ուսական ծիր (1525 մ.)։

Կարևորագույն ճանապարհներն են՝ 1) Չին-արևելյան և 2) Հարավ-Մանջուրական յերկաթուղիները։

1. Չին-արևելյան յերկաթուղին կառուցված է ուս ցարական կառավարության կողմից։ Կառուցումն սկսել է 1897 թ. և ավարտվել 1902—1903 թ.թ.։

Ճանապարհի ընդհանուր յերկարությունն է 2500 կմ.։ Սկզբում նա քաղկացած էր հետևյալ մասերից՝ Մանջուրիա կայսրանից մինչև Պոդբանիչնայա կայսրանը (Մանջուրիայի սահմանային կայսրանները) և Սարբինից մինչև Պորտ-Արտուր։

Պորտ-Արտուր 1905 թ. պայմանագրի համաձայն, Չանչունիայից (Սարբինից հարավ) մինչև Պորտ-Արտուր մասը կցվեց Ճապոնիային։

Ներկայումս Չին-արևելյան յերկաթուղին քաղկացած է հետևյալ մասերից՝ Մանջուրիա կայսրան—Պոդբանիչնայա, յերկարությամբ՝ մոտ 1484 կմ. և Սարբին-Կուանչենցզի, յերկարությամբ մոտ 238 կմ.։

Այսպիսով գլխավոր գծերի յերկարությունը հավասար է 1722 կմ., իսկ ընդհանուր յերկարությունը մերձադար և փայտակրման ուղիների հետ միասին մոտ 2310 կմ.։ Ճանապարհն ունի մեկ ծիր։

Ճանապարհի շարժուն կազմի մեջ 1930 թ. հաշվում էր 507 չոգեքարշ, 632 մարդատար և 10 հազարից ավելի ապրանքատար վագոններ։

Ճանապարհը լավ սարքավորված է հեղադրական և հեռախոսային կապով։ Կայսրանները (74 կայսրան), կայսրանային շենքերը, ջրամատակարարումը և այլն— գտնվում են սքանչելի վիճակում։

Ճանապարհի խոշոր կառուցումներից անհրաժեշտ է նշել՝ Սինգանի տունելը (Մեծ Սինգանի վրա) 3 կմ-ից ավել յերկարությամբ, 3 տունել Սարբին-Պոդբանիչնայա մասի վրա, 75-ից մինչև 120 մ. յերկարությամբ, Յիցիկարից հարավ Նոննի գետի վրայի կամուրջը 650 մ. յերկարությամբ, 2 կամուրջ Սանգարի գետի վրա՝ մեկը Սարբինի մոտ, մոտավորապես 950 մ. յերկարությամբ և մյուսը Սարբինից հարավ, 736 մ. յերկարությամբ։

Ճանապարհի վրա աշխատում են 10-11 հազար բանվորներ ու ծառայողներ, հաշվելով ժամանակավոր և որավարձ աշխատողներին։

Ճանապարհին ունի մի շարք ոժանդակ ձեռնարկներ՝ անտառային կոնցեսիաներ, անխաճանքեր, փայտամշակման գործարաններ և այլն։ Վարչությունը և գլխավոր արհեստանոցները գտնվում են Սարբինում։

Ճանապարհի ընդհանուր արժեքը գնահատվում է 400 միլիոն վոսկի ուրբլի։ Ճանապարհի շահույթը 1930 թվին կազմում էր 20,5 միլիոն վոսկի ուրբլի։

Չին-արևելյան յերկաթուղու բեռնաշրջանառությունը կազմում էր 1914 թվին 1086 հազար տոնն, 1928 և 1929 թվերին տարեկան 5500 հազարական տոնն։

Չին-արևելյան յերկաթուղին, վորպես տեւորական ձեռնարկություն, կառավարվում է միասին՝ Չինաստանի և ՍՍՀՄ-ի կողմից։ Ճանապարհի կառավարիչը ՍՍՀՄ-ի քաղաքացի յէ։

2. Հարավ-Մանջուրական յերկաթուղին.—Ամփոփում է իր մեջ Չին-Արևելյան յերկաթուղու նախկին հարավային ճյուղի մի մասը — Չանչունից մինչև Դայրեն (705 կիլոմետր) և Մուկդեն-Անդուն ճյուղը (260 կմ.), վորը՝ Հարավ-Մանջուրական յերկաթուղին միացնում է Կոբեական ցանցի հետ։ Ճանապարհի ընդհանուր յերկարությունը, իր փոքր ճյուղերի հետ միասին (Դաչիչաո-Ինկու, Ֆուչունի ճյուղը և ուրիշները) հասնում է 1100 կմ.։ Ճանապարհի հիմնական գլխավոր գիծը Դայրենից մինչև Կայսրան կայսրանը (մոտ 500 կմ.) ունի կրկնակի աղուր, մնացածում՝ մեկ։

Ճանապարհի շարժուն կազմը հաշվում է մոտ 450 չոգեքարշ, 520 մարդատար և 7500 ապրանքատար վագոն։ Կապը, ջրամատակարարումը, կայսրանների սարքավորումը գտնվում են լավ վիճակում։

Հարավ-Մանջուրական յերկաթուղին ունի մի շարք խոշորագույն յրացուցիչ ձեռնարկներ Մանջուրիայում՝ անխաճանքեր Ֆուչանում, Անչանի յերկաթուղային գործարանները, արհեստանոցներ Դայրենում, չոգենավարկություններ և այլն։

Ճանապարհի ընդհանուր արժեքը լրացուցիչ ձեռնարկների հետ միասին հասնում է 700 միլիոն իենից^{*)} ավել:

Այսպիսով հարավ-Մանջուրական յերկաթուղին մի ուժեղ կապի-տալիստական ձեռնարկութուն է և հապոնական իմպերիալիզմից հպո-րադույն զենք եր գաղութային քաղաքականությունը Մանջուրիայում կիրառելու համար: Հարավ-Մանջուրական յերկաթուղին առանցքն է, վորի շուրջը դասավորվում է Հարավային Մանջուրիայի ամբողջ տն-տեսական կյանքը:

Հարավ-Մանջուրական յերկաթուղու բեռնաշրջանառությունը 1929—1930 թվերին կազմում էր մոտ 18 միլիոն տոնն, գերազանցելով Չին-արեւելյան յերկաթուղու բեռնաշրջանառությունն ավելի քան 3 անգամ:

1928—29 թ. գործարքային տարում ճանապարհի ընդհանուր յեկա-մուտը հասնում էր 240 միլիոն իենի, տալով 42 1/2 միլիոն իեն զուտ չա-հույթ:

Հարավ-Մանջուրական յերկաթուղին կապված է ծովի հետ Դալյոն, Ինկու և Անդուն նավահանգիստներով:

Հարավ-Մանջուրական յերկաթուղու հետ կապված են հետեւյալ, ինչպես չինական, այնպես էլ ճապոնական յերկաթուղիները (չինված ճապոնական փոխառություններով) .

Մուգդեն—Սալգուն—Գիրին (չինական) յերկաթուղ.	510	կմ.
Գիրին—Դունխուա (ճապոնական)	»	210 »
Սիպինգալ—Տաոնան (ճապոնական)	»	426 »
Տանդան—Անանցիսկական յերկ. (ճապ.)	»	224 »
Գիրին—Դունխուա (ճապոնական) յերկաթ.	210	կմ.:

Վերջին ճանապարհը դնում է ավելի հեռու— Դունխուայից դեպի արեւելք. ճապոնացիներն այժմ շտապ կարգով միացնում են նրան այն յերկաթուղու հետ, վորը Սալգուն քաղաքից (Կայնե) գնում է դեպի Հյուս. Կորեա—դեպի Դանխուա: Այս ճանապարհը յեւք կունենա դեպի ճապոնական ծովը և Հարավ-Մանջուրական յերկաթուղին կկապի Սեյսին և վահանգատի հետ: Ըստ ճապոնացիների մտադրության, Գիրին—Սոյ-րենյան (Կայնեյան) նոր յերկաթուղին և նրա շարունակութունը Գի-րին—Չանչունյան յերկաթուղին պետք է շարունակվեն դեպի արեւմուտք —մինչև Տաոնան և ելի հեռու դեպի Բարգա: Այս պլանով նապոնացիները հետապնդում են մի նպատակի՝ Հյուսիսային Մանջուրիայում, Չին-Ա-րեւելյան յերկաթուղուն զուգահեռ, ստեղծել իր գլխավոր գիծը, յեւք ունենալով դեպի ծով (Սեյսինի նավահանգիստը), շահագործելու համար Հյուսիսային Մանջուրիայի բնական հարստությունները և դուրս քաշե-լու նրա հումաւորքը:

Այս գլխավոր գիծը կմոտենա Խորհրդային Անդրբայկալի սահման-ներին:

*) Ի յենը հալասար է մաս 97 կապեկի վասկով:

Հարկավոր է առանձնացնել չինական ճանապարհների խումբը, վո-րոնք Չին-արեւելյան յերկաթուղուց անցնում են դեպի Հյուսիս, այն և Յիցիկար-Կաչանի (22 կմ.) և Սուխայի (216 կմ.) յերկաթուղիները:

Վերջապես Հարավային Մանջուրիայում և անցնում Պեկին—Մուկ-դենյան յերկաթուղին (Մուկդեն—Շանհայ-դուան շրջանը—մոտ 422 կմ.) դեպի Ինկու և դեպի Հյուսիս՝ մինչև Տունյաո տանող ճյուղերով (Դա-Սուչան—Տունյաո յերկաթուղին) և նոր ճանապարհ է չինվում Տաոնյա-յից (Հյուսիսային Տաոնյա) մինչև Սոլունյա քաղաքը (Մեծ ինդանից դեպի հարավ):

Այսպիսով ավելի շատ յերկաթուղիներ ունի Հարավային Մանջու-րիան:

Հոգուղիներ. —Մանջուրիայի հողուղիները, քիչ բացառությամբ, իրենցից ներկայացնում են գյուղերի մեջ բնկած սովորական ճա-նապարհ: Յեւթուպական խճուղիների տիպի խճուղիները քիչ են: Այդպիսիները կան գլխավորապես Հարավային Մանջուրիայում (Մուկդեն — Դալյոն խճուղն Վարչական և առևտրական խոշոր կենտրոնները մացնող մի շարք հողուղիներ հարմարեցրած են փոստի տեղափոխության և ավտոմոբիլային յերթեվեկության համար և ունեն հեռադրական, և յերբեմն էլ հեռախոսային գծեր: Այս ճանապարհները կոչվում են փոստային տրակտներ: Նրանք տեղ-տեղ ունեն արհեստական յերեսք և կահավորված են փոս-տային կայաններով: Համարյա բոլոր հողուղիներն ունեն իջևաններ, ինդ վորում, ծալրամասերով, դյուղերով և քիչ մարդաբնական տեղերով անցնող ճանապարհների վրա (Բարգում, Ամուրի շրջան) այս իջևան-ները, ճանապարհի ամբողջ յերկարությամբ, միակ մարդաբնակ կետերն են:

Ճանապարհների անցնելու հարմարությունները ամբողջովին կախ-ված է տարվա յեղանակից և հողի վերնաշերտից: Չմեռը, վորը Ման-ջուրիայում սովորաբար սակավաճյուն է լինում, և աչնանը՝ ճանապարհ-ները միանգամայն մատչելի յեն չինական համեմատաբար ծանր սալե-րի (յերկանիվ, լծած 4—5 և ավելի ձիեր, բեռնամբարձությունը 1/2-ից մինչև 1 տոնն) և ավտոմոբիլների յերթեվեկության համար: Իսկ ամրանը, առանձնապես անձրևների շրջանում, յերթեվեկությունը ճանապարհնե-րով չափազանց դժվարանում է, և հաճախ բոլորովին դադարում. հողը փեր է ածվում անանցանելի ցեխի: Գետերից, լեռնային զետակներից անցնելը ծանծաղատով կամ լաստերով անկարելի յե դառնում: Յերբեմն ամբողջ շրջաններ անձրևների վոյջ շրջանում կտրված են մնում: Յերկրում ավտոտրանսպորտի զարգացման կապակցությամբ, ճանա-պարհներն սկսվում են աստիճանաբար հարմարվել ավտոմոբիլային յեր-թեվեկության համար:

Գլխավորապես ճանապարհները հետևյալներն են՝ Բարգում—Ճանապարհներ, վորոնք Սալյարից գնում են դեպի Մեծ Խինդան և Մոնղոլիա. ճանապարհների հանգույցն է Սալյար քաղաքը։ Սալյարից դեպի նահանգում՝ ճանապարհներ, վորոնք Յիցիկարը կապում են Բարգի հետ (Յիցիկար—Սալյար տրակտ), Ամուրի շրջանի հետ (Յիցիկար—Սալյարյան տրակտ), Սարբինի հետ (Յիցիկար—Սալյարյան տրակտ), Գիրինի նահանգի հետ (տրակտ Յիցիկար—Բուդուն—Գիրին քաղաք) և Հարավային Մանջուրիայի հետ (Յիցիկար—Տանոնան տրակտ)։ ճանապարհների հանգույցն է Յիցիկար քաղաքը։

Գիրինի նահանգում ճանապարհներ, վորոնք նրա կենտրոնը՝ Գիրին քաղաքը միացնում են Սարբինի, Մուկդենի և նահանգի արևելյան ծայրամասի հետ։ (Գիրին—Սարբին ճանապարհ, Մուկդարի գետի գետաբերանը և Գիրին—Նինգասան)։ ճանապարհների հանգույցներն են Սարբինը և Գիրինը։

Լյաոնինի նահանգում ճանապարհներ, վորոնք Մուկդենը կապում են Ներքին Չինաստանի (Վագեմի առևտրական տրակտ Մուկդեն—Ցզինչյու—Պեկին) և Դալյենի ու Մոնղոլիայի հետ։

Ամենագլխավոր հողուղիների ընդհանուր յերկարությունը հասնում է 3 1/2 հազար կմ.։

Ջրային ֆանապարհները.—Ամենագլխավոր ջրային ճանապարհները Մանջուրիայում հանդիսանում են Մուկդարի գետը, նրա Նոննի վտակը և Լյաոնին գետը։ Իսկ Ամուր, Ուսսուրի և Արգուն գետերը ծառայում են խորհրդային և չինական միասեղ նավագնացության համար։

Մուկդարի և նրա վտակ Նոննի գետերը Հյուսիսային Մանջուրիայի գլխավոր գետերն են, կապված Ամուրի հետ և նավարկելի յեն մեծ տարածության վրա։ Նրանք ամեն տարի փոխադրում են հսկայական քանակությամբ հացահատիկի և այլ բեռներ։ Չինական նավատորմը, չոգեզոնաց և վոչ չոգեզոնաց, Մուկդարի գետի վրա (վորը միաժամանակ նաև Ամուրի և Ուսսուրի նավատորմն է) բաղկացած է 108 չոգենավից և 140-ից ավել բարժերից և կատերներից. բացի դրանից կան և մեծ քանակությամբ առագաստավոր ջոկաններ։ Նավատորմի բեռնամբարձությունը հասնում է 100 հազար տոննի։ Սարբինում կան գետի, չոգետար և ուրիշ նավեր ու բարժեր կառուցելու արհեստանոց— նավաբարներ (պատկանում են Շիոդի հայտնի գործարաններին)։

Լյաոնին գետի հազարակիցությունն առավելագույնս առաջատանալայինն է (ջոկայով)։

Ծովային տրասպորտը.—Մանջուրիայի ծովային սպասարկումը և

*) Ջոկայ չինական առագաստանավ։

գլխավորապես ուտարերկրյա չոգենավային նավատորմի կողմից։ Բայց սրա հետ միասին շատ զարգացած և նաև ծովային ջոկային հազարակիցությունը։

Յերկրի կարևորագույն նավահանգիստներից անհրաժեշտ է նշել հետևյալը՝ Դալյեն, Ինկու և Սնդուն (վերջինս գտնվում է Կորեայի սահմանի վրա)։ Դալյենը ճապոնական նավահանգիստ է։ Նա կապ է պահում ճապոնիայի, Չինաստանի, Յեկոսկայի և Հյուս. Ամերիկայի հետ։

Վերջին յերկու տարվա ընթացքում չինացիներն սկսեցին չինել խուլուղաո նավահանգիստը (Լյադանական ծովածոցի արևմտյան ծովափում)։ նավահանգստի կառուցումն այժմ մի շարք պատճառներով դադարեցրած է։

Ավտոմոբիլային տրանսպորտը.—Ավտոտրանսպորտը Մանջուրիայում նոր միայն զարգանում է։ Հողուղիների մատչելիությունն ու հարմարությունը, մանավանդ տարվա չոր յեղանակներին (աչուն, ձմեռ), և համեմատաբար թույլ զարգացած յերկաթուղիների ցանցը ավտոտրանսպորտի զարգացման մեծ հնարավորություններ են տալիս։

1930 թվին Մանջուրիայում հաշվվում էր 4 1/2 հազարից ավել մեքենա, վորոնցից մոտ 3 հազարն ընկնում էր Հյուսիսային Մանջուրիային։ Մանջուրիայում ավելի շատ գործածության մեջ են ամերիկական թե՛ մարդատար և թե՛ ապրանքատար մեքենաները։

Ավտոտրանսպորտը գործադրվում է գլխավորապես մարդկանց յերթեկույթյան և մասամբ բեռների ու փոստի փոխադրության համար։ Հատկապես մարդկային յերթեկույթյունը խիստ զարգացած է այն ճանապարհների վրա, վորոնք գնում են յերկաթուղային շրջանները (Չինարի, Հարավ—Մանջ. յերկաթուղի և ուրիշները)։ Ավտոմոբիլային կայանների հանգույցներն են՝ Սարբին, Յիցիկար, Գիրին, Մուկդեն, Չանչուն և ուրիշները։ Ավտոմոբիլային յերթեկույթյունը խիստ զարգացած է յերկրի կենտրոնում. մենակ Սարբինում կա 1000-ից ավել մեքենա։

Կապի միջոցները.—Կապի միջոցները Մանջուրիայում բավականին արագ են զարգանում։

Փոստային գրասենյակներ և նրանց բաժանմունքներ կան շատ թե՛ քիչ խոչը քաղաքներում և բնակատեղերում. 1930 թվին նրանց թիվը հավասար էր մոտ 815-ի։ Փոստային գերատեսչությունն ամեն տարի հրատարակում է յերկրի փոստային հիմնարկների ցանցի քարտեզը։

Բոլոր գաղափարական քաղաքները, կառավարական հետազոտիկերով կապված են նահանգական կենտրոնների՝ Յիցիկար, Գիրին, Մուկդեն և Սարբին քաղաքների հետ։ Այսպիսով, նույն իսկ յերկրի ծայրամասի

մարզերը մշտական յերկաթալարային չափ ունեն Մանջուրիայի գլխավոր քաղաքների հետ: Հեռագրային լարերի ընդհանուր յերկարութիւնը հաս-
նում է 20 հազար կլմ-ից ավելի: Բացի կառավարական գծերից, պցված
նաև հեռագրական ցանց, վորը պատկանում է յերկաթուղիներին:

Բոլոր խոշոր կենտրոններում՝ Խարբին, Գիրին, Տաոնան, Չանչուն,
Ինկուու, Յիցիկար, Մուկդեն և այլն, կան հեռախոսային կայաններ մեծ
թվով բաժանորդներով: Միջքաղաքային հեռախոսային հաղորդակցու-
թիւնը կապում է Խարբինը Յիցիկարին, Չանչունին, Մուկդենին, Տա-
ոնանին և այդ գլխավոր քաղաքներին սահմանակից ճյուղավորված քա-
ղաքների հետ:

Ռազմական յերկրում նոր միայն սկսվում է և վոչ մեծ ռազմակա-
յաններ կան Խարբինում, Գիրինում, Յիցիկարում, Մուկդենում,
Ինկուուում, Մախալյանում, Ֆուդզինում, Սոյանում, Տաոնանում,
Պոգրանիչնայա կայարանում և մի քանի ուրիշ կետերում: Յեւրոպայի
հետ կապ պահպանող կայանն կա միայն մեկը—Մուկդենում:

Վերջին տարիների ընթացքում Մանջուրիայում սկսվում է զարգա-
նալ նաև ռազիո հաղորդումը:

Մանջուրիայում ճապոնիային են պատկանում մի չարք փոստային
և հեռագրական գրասենյակներ և նույն իսկ ռազմակայաններ, վորոնք
ընկած են Հարավ-Մանջուրական յերկաթուղու չերտի վրա (Դայրենի
ռազմակայանը):

Ռազմական տեսակետից ի՞նչ յեզրակացութիւններ կարելի յե ա-
նել Մանջուրիայի մակերևութի մասին:

Նրա լեռնային և անտառային չրջանները, ինչպես որինակ՝ Մեծ
Խինգանի, Իլխարի-Ալինի, Փոքր Խինգանի չրջանները և արևելյան չրը-
ջանը (Չանբայչան լեռները) ունենալով քիչ քանակութեամբ ճանապարհ-
ներ, ամբողջովին վերցրած հնարավորութիւն չեն տալիս խոշոր գին-
վորական գանգվածների գործողութեանը (կորպուս, բանակ) և ժամա-
նակակից տեխնիկայի կիրառմանը, (գրահատանկային զորամասեր և
այլն): Այդ չրջաններն ավելի պիտանի յեն առանձին ջոկատների գործո-
ղութեան համար:

Հարթավայրերի չրջանները՝ Բարգինյան անապատները, Մանջու-
րական Մուսգարյան) հարթավայրը ինչպես նաև Լյաոնի, Սուենգարի,
Նոնի գետերի հովիտները համեմատաբար հարուստ են յերկաթուղիներ-
ով, հողողիներով և այլ ճանապարհներով ու լիովին մատչելի յեն ու
հարմար ժամանակակից տեխնիկայով հաղեցած խոշոր բանակների գոր-
ծողութեան համար: Հեծելազորը, ավիացիան, գրահատանկային մասե-
րը և ուրիշները կարող են լայնորեն գործադրվել առանձնապես Բարգում
և Սուենգարյան հովտում:

Կարևորագույն սահմաններն են՝ Մեծ Խինգանը, վորը խափանում է
Սուենգարյան հարթավայրից և Հարավային Մանջուրիայից դեպի Բար-
գա տանող ճանապարհը: Փոքր Խինգանը, վորն ընկած է Հյուսիսային
Մանջուրիայից դեպի Սմուր դետը դնացող ճանապարհների վրա, և
Չանբայչան լեռները, վորոնք փակում են դեպի մեր Մերձծովյան սահ-
մանները դնացող ճանապարհները:

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վարչական տեսակետից Մանջուրիան բաժանվում է յերեք նահանգ-
ների: Լյաոնինյան (Նախկին Մուկդենյան), Գիրինյան և Խեյլունցզյան:
Վերջինիս մեջ մտնում է այսպես կոչված Խոլունցբուրյան չրջանը, վորն
ամփոփում է իր մեջ Բարգի տերիտորիան և ունի մի քանի կառավարա-
կան առանձնահատկութիւններ: Բացի դրանից կա նաև առանձին վար-
չական միավոր—Չին-արևելյան յերկաթուղու նախկին ոտարացման
չերտը, վորը կոչվում է «Յերեք արևելյան նահանգների հատուկ չրը-
ջան»:

Լյաոնցունյան թերակղզին (Հարավային Մանջուրիա) մտնում է
Կվինտունյան դեներալ—նահանգապետութեան մեջ, վորը կառավարվում
է ճապոնական վարչական մարմինների կողմից:

Մինչև ճապոնական ոկուպացիան, Մանջուրիան ուներ ամբողջ
Չինաստանում ընդունված վարչական սխեմով:

Յերեք քաղաքացիական վարչութիւնը գլխավորում էր «Հյուսիս-
արևելյան գավառների քաղաքական կոմիտեն»: Այդ կոմիտեյի նախա-
գահը յենթարկվում էր Չժան-Սյուե-Լյանին, վորպես «Հյուսիս-արևել-
քի պաշտպանութեան գլխավոր հրամատարին»: Հետևաբար ամբողջ
քաղաքացիական և ռազմական իշխանութիւնը Մանջուրիայում կենտ-
րոնացած էր Չժան-Սյուե-Լյանի ձեռքը, վորն իր հերթին յենթարկվում
էր Նանկինում դանլոդ՝ այսպես կոչված Չինաստանի Կենտրոնական
կառավարութիւնը:

Յուրաքանչյուր նահանգ ուներ իր կառավարութիւնը, վորի գլուխ
կանգնած էր նախագահը: Նահանգական կառավարութիւնները յեն-
թարկվում էին «Քաղաքական կոմիտեյին» Մուկդենում, այսինքն՝
Չժան-Սյուե-Լյանին:

Ոտարերկրացիների հետ հարաբերութիւն պահպանելու համար
կառավարութիւններին կից կային Կենտրոնական (Նանկինյան) կառա-
վարութեան արտաքին գործերի մինիստրութեան գործակալներ:

«Արևելյան նահանգների հատուկ չրջանը» ունի իր «Գլխավոր իշխա-
նավորը» վորին կից գոյութիւն ունի այդ չրջանի հատուկ վարչութիւն:
Գլխավոր իշխանավորը յենթարկվում էր անմիջականորեն Մուկդենին:

Հետևյալ վարչական միավորը Մանջուրիայում հանդիսանում են
գավառները, թվով 147: Գավառների գլուխ կանգնած են պետեր, վո-



րոնք նշանակված ելին նահանգական կառավարութեան կողմից: Գա-
վառները հետ միաժամանակ կան հատուկ, այսպես կոչված «գաղութա-
նացրած» գավառներ կամ շրջաններ, վորոնք վորոշված ելին գաղթական-
կոլոնիստների համար: Հետզհետե բնակվելով՝ այս շրջանները կեր-
պարանափոխվում են սովորական գավառներ:

Սովորութեւրեան շրջանը, կամ Բարդան, վորտեղ բնակվում են մոն-
ղոլ-քոչվորներ, ունի իր մոնղոլական վարչական միավորները «Սովորու-
ները» (18 խոշուն): «Սովորները» յենթարկվում են մոնղոլական գոր-
ծերի Հատուկ Մոնղոլական կառավարութեանը Բարդում: Այդ վարչու-
թեան պետը մոնղոլական իշխան է, վորը կոչվում է «Սովորունտեն» և
վորի բնակավայրը Սայլար քաղաքն է: Նա նշանակվում է Չինաստանի
Կենտրոնական կառավարութեան կողմից և գտնվում է տեղական, նա-
հանգական կառավարութեան վերահսկողութեան տակ:

Քաղաքական տեսակետից Մանջուրիան մի ամբողջութուն չի ներ-
կայացնում: Նա բաժանված է մի շարք «կալվածքների», վորոնց լիակա-
տար տերերը հանդիսանում են միլիտարիստական խմբավորումները,
նրանք առանց վերադաս մարմինների գիտութեան իրենց հայեցողու-
թեամբ նշանակում են տեղական վարչութուն, սեփական քմահաճույ-
քով ծախսում հավաքած յեկամուտները, բնակչութեան վրա հարկեր և
ամեն տեսակ տուրքեր նշանակում: Տեղական, գավառական վարչութու-
նը հռչակաբար իր հերթին առանց վերահսկողութեան «տիրութուն է անում»
գավառում և հարստանում բնակչութեան հաշիւին:

Մանջուրիայի բաժան-բաժան դրութիւնը այժմ ծաղոնիան լայնո-
րեն ողտաղործում է իր հափշտակողական պլանները կենսագործելու
համար: Նա մի կողմից աշխատում է ել ավելի բաժան-բաժան անել յեր-
կիրը, ոժանդակելով Մանջուրիայում դանազան «նոր» կառավարու-
թիւններ կազմելուն (Գիրինում, Յիցկարում և ուրիշ կայաններում),
մյուս կողմից իր նշանակած «նոր» կառավարութիւնները գլխավորող-
ների միջոցով (Գենեքալ Սի-սյա Գիրինում և այլն) ամրացնում է իր ազ-
դեցութիւնն այդ շրջաններում:

ԲՆԱԿՁՈՒԹՅՈՒՆԸ

Մանջուրիայի բնակչութեան թիւն այժմ 30 միլիոնից ավելի չէ:
Ամենից խիտ բնակեցրած է Լյաոնիյան նահանգը—16 միլիոն մարդ, Գի-
րինյան նահանգում հաշվում է 9 միլիոն և Սեյլունցղյանում՝ 5½ միլիոն:
Ազգաբնակչութեան խտութիւնն ըստ նահանգների հետեւյալն է—Լյա-
ոնիյանում՝ 68,4 մարդ 1 քառ. կլմ. վրա, Գիրինայում—31,2 և Սեյլուն-
ցղյանում—8,1 մարդ: Իսկ Սեյլունցղյանի նահանգի մի քանի շրջաններ
(որինակ Բարդան) շատ նոսր են բնակեցրած—մինչև 1 մարդ 1 քառ.
կլմ. վրա:

Յերկրի բնակչութիւնն արագ աճում է: 1900 թիւին այնտեղ հաշ-
վում էր մոտ 13 միլիոն մարդ, 1910 թիւին 16 միլիոն, և 1929/30 թիւին—20

միլիոն, այսինքն 30 տարւա ընթացքում բնակչութիւնը շատացել է հա-
մարա 2½ անգամ: Այդպիսի աճումը կապված էր գլխավորապես յերկրի
ուժեղ գաղութայնացման հետ, Չին-արեւելյան յերկաթուղու կառուցու-
մից հետո. կարիքից ըջված չին-գաղթականներին գրավում էլին Ման-
ջուրիայի հսկայական դատարկ տարածութիւնները: Միջին հաշիւով ամեն
տարի Չինաստանից Մանջուրիա էլին գալիս 250-ից մինչև 500 հազար և
ավելի գաղթականներ:

Մանջուրիայի բնակչութեան ճնշող մասսան կազմում են չինացիք
(94-95%), վորոնք աստիճանաբար դուրս էլին գցում տեղական ցեղե-
րին—մանջուրներին, դաուրներին և ուրիշներին: Կորեացիք մոտ 1 միլի-
ոն, նրանք բնակվում են գլխավորապես Կորեայի ասհմանակից Գրինյան
նահանգի արեւելյան շրջաններում: Բարդամ Մեծ Սինդանի (Սոլուն-Տա-
ոնանյան) շրջանում բնակվում են, քոչվորական և վորսորդական, մոն-
ղոլական ցեղերը (մոտ 60-70 հազար մարդ): Բարդինյան մոնղոլները մին-
չև այժմ ել պահպանել են իրենց ինքնուրույնութիւնը և ունեն սեփական
կառավարութիւն: Ծաղոնացիները հաշվում են մոտ 200 հազար մարդ-
նրանք քնակվում են գլխավորապես հարավային Մանջուրիայում.
սրանք մեծ մասամբ առևտրականներ են, վաճառականներ, ձեռնարկա-
տերեր և այլն:

Վերջապես հարկավոր է առանձնացնել ուռաների նշանակալի միջ-
նախովը Մանջուրիայում: Նրանք մոտավորապես 150 հազար հոգի չեն:
Այդ թիւից մոտ 60-70 հազարը հին բնակիչներ են, վորոնք Մանջուրիայում
բնակվում են դեռևս Չին-արեւելյան յերկաթուղու կառուցման ժամանակ-
ներից, ինչպես նաև խորհրդային քաղաքացիներ, սրանց թիւում Չին-ա-
րեւելյան յերկաթուղու բանվորներ ու ծառայողներ: Ռուսների հիմնական
մասսան, մոտ 80-90 հազար մարդ բնակվում են Չին-արեւելյան յերկա-
թուղու շերտում և խորքինում:

Ռուս սպիտակ վտարանդիները հաշվում են 70 հազարից ավելի:
Նրանք հաստատվել են Մանջուրիայում Կարմիր բանակի կողմից Սիբիրի
և հեռավոր արեւելյան հակահեղափոխութիւնը ջարդուփչուր անելուց հե-
տո: Այդ խումբը բաղկացած է գլխավորապես սպաներից, Կոլչակի, Սե-
մյոնովի և ուրիշների նախկին «բնակիչների» կազակներից, ինչպես նաև
կուլակաքին և բուրժուական տարրերից, վորոնք փախել են խորհրդային
տերիտորիայից: Նրանց մի մասը ծառայութեան է մտել չինական ձեռ-
նարկներում, վոստիկանութեան մեջ և այլն, իսկ մյուս մասը քարշ է
տալիս իր խղճուկ դոյութիւնը, ապրելով վոդորմութեամբ և այլն:

Հակահեղափոխական սպիտակ գվարդիականները ապրում են հույսեր
ունենալով, թե հեռավոր Արեւելքում միջազգային կապիտալի ոգնու-
թեամբ կվերսկսվի հակախորհրդային պայքարը: Նախկին սպաները, կա-
զակները, բուրժուականների գաղակները ու խոշոր չինովնիկներից դուրս յե-
կածներն ունեն իրենց ուղղմական և «ազգային» (գլխավորապես միապե-
տական). կազմակերպութիւնները, վորոնք սերտորեն կապված են Չի-
նաստանի (Շանհայ, Պեկին) և Յեյրուսալի (Փարիզ) մնացած սպիտակ
գվարդիական կազմակերպութիւնների հետ: Սպիտակների կենտրոնը
Մանջուրիայում խորքին քաղաքն է: Այդ ամբոխի «ղեկավարներն» են
Հեռավոր Արեւելքի սպիտակ շարժման յեկված տիրահոգակ գործիչները,
այնպիսիները, ինչպես Դիդերիկս, Սորվատ, «Ատաման» Սեմյոնովը և

ուրիշները: Սպիտակների և նրանց «դեկավարները» մեջ միասնականություն չկա: Նրանք մշտական թշնամանքի մեջ են իրար հետ՝ միջադեպին բուրժուազիայից (ձապոնական, Չինական և այլն) ստացվող վոդորմուսթյունը, «նալաստը» բաժանելու հողի վրա: Սակայն նրանք բոլորը համաձայնություն են դալիս մի բանում—գաղանային ատերուծյան մեջ դեպի խորհրդային միությունը:

Սպիտակների հակախորհրդային դործնեությունը սովորաբար արտահայտվում է նրանց կողմից տարբեր տեսակի պրովակացիաներ կատարելու մեջ, խարբրելու հրատարակվող իրենց թերթիկների միջոցով խՍՀՄ-ի մասին անմիտ լուրեր և հեղյուրանքներ տարածելու մեջ և այլն: Նրանք կենդանանում և առանձնապես ակտիվ են դառնում խՍՀՄ-ի հետ առնչություն ունեցող վորեն դեպքի մոմենտին Մանջուրիայում և Հեռավոր Արևելքում: Այդպես յեղավ Չին-արևելյան յերկաթուղու կոնֆլիկտի ժամանակ, յերբ սպիտակները, չինական զինվորները ոգնությունը ջոկատներ կազմակերպեցին և հարձակում էլին դործում մեր տերիտորիայի վրա, ձերբակալում Չին-արևելյան յերկաթուղու ծառայողներին և այլն: ձապոնացիների կողմից Հարավային Մանջուրիայի ոկուպացիայի յենթարկելու կապակցությամբ, սպիտակները նորից շարժվեցին և նրանց փոքր ջոկատները յերեւացին արդեն Չին-արևելյան յերկաթուղու շերտի վրա: Առանձին յեռանդուն հակախորհրդային դործնեություն է ցույց տալիս Սեմյոնովը, վորը վաղուց կապված է ձապոնական զինվորականների հետ և այժմ հավաքում է իր դործակիցներին: Սպիտակները մշակում են Հեռավոր Արևելքում «բուֆերային» պետություն ստեղծելու հակախորհրդային պլաններ: «Այդ գաղափարը» լիովին հավանություն է ստանում իմպերիալիստների կողմից:

Մյուս յեվրոպացիներից Մանջուրիայում բնակվում են մի քանի հարյուր ամերիկացիներ, անգլիացիներ, գերմանացիներ և այլն:

Զբաղմունքը.—Չինացիների հիմնական մասսան դրադվում է հողագործությամբ, կորեացիք՝ չալթուկի մշակությամբ: Մոնղոլները բարդում վարում են արոտատեղային անասնապահություն, դրադվում են վորսորդությամբ և այլն:

Ընդհանրապես գյուղական բնակչությունը հասնում է 85—88%-ի, իսկ քաղաքայինը՝ 12—15%:

Բնակչության բնութանուր դրագիտությունը չափազանց ցածր է: Ուսուցումը դպրոցներում մատչելի յե սովորաբար քաղաքի և գյուղի բնակչության հարուստ և ունեւոր խավին միայն:

Տարրական դպրոցների թիվը գյուղական վայրերում շատ քիչ է և քաղաքները կան միայն մեծ գյուղերում: Որինակի համար, խելուղդլյանի նահանգի ամենամեծ և ամենահարուստ գավառներից մեկում, դեռևս մոտիկ անցյալում 300 հազար բնակչության համար գոյություն ուներ բնդամենը 20 տարրական դպրոց: Միջնակարգ դպրոցների գոյություն ունեն միայն գավառական խոշոր կենտրոններում և մեծ քաղաքներում: Բարձրագույն ուսումնական հիմնարկները կենտրոնացած են Մուկդենում և խարբինում (համալսարան, բարձրագույն տեխնիկական դպրոցներ և այլն): Ժոցովրդական կրթության կարիքների համար ման-

ջուրական յշխանությունները մինչև այժմ բաց էլին թողնում յերկրի ծախսերի բյուջեի 1%-ը միայն:

Մանջուրիայում տիրապետող (պետական) կրոն չկա: Կիրևացիք դավանում են կոնֆուցիայի ուսմունքը, բուդդիզմը, մոնղոլական ցեղերը՝ մեծ մասամբ լամիսները, տեղացի ցեղերը (սոլոնները, որոհենները, մանջուրները) շամանիստներ են:

Գաղալարգային կազմը.—ձապոնեն ցույց տալ, թե Մանջուրիայի բնակչությունը դասակարգային ինչ բաժանում ունի՝ հնարավոր է, վորովհետև յերկրի բնակչության հաշվառումը, մանավանդ գյուղական բնակչության, վատ է դրված: Բնակչության դասակարգային կազմի մոտավոր պատկերը տալիս են հետևյալ թվերը՝

Գյուղական բնակչությունը. չքավոր-գյուղացիներ՝ մինչև 30—35%, միջակներ՝ 45—50%, կուլակներ՝ մանր-կալվածատերեր մինչև 15%:

Քաղաքի բնակչությունը. խոշոր և միջին բուրժուազիա 8—10%, մանր բուրժուազիա մինչև 75% և պրոլետարիատ մոտ 15%:

Ինչպես տեսնում ենք, բնակչության ճնշող մասսան գյուղում կազմում են չքավորներն ու միջակները: Չքավորական դանդաժի մեջ կան նշանակալի թվով բատրակներ: Երգյունարերական բանվորների թիվը Մանջուրիայում հաղաար է 500—600 հազար հոգու, այսինքն ամբողջ յերկրի բնակչության մինչև 2%-ը: Հարկավոր է հիշել, վոր Մանջուրիայում կան դեպի բուրժուազիայի բանվոր-տնայնագործներ, մասնավանդ Հյուսիսային Մանջուրիայում, վորտեղ դեռևս թույլ է դարձուցած մեքենայական արտադրությունը և գերիշխում է տնայնագործական և կիսատնայնագործական շրջմունքը: Հետևաբար դասակարգային ալելի խիստ շերտավորում մենք տեսնում ենք մանջուրական գյուղացիության մեջ: Հենց դա յե, վոր սռաջ է բերում, դեռևս անկադմակերպ դասակարգային պայքար մանջուրական գյուղում:

Բնակեցրած կեռերը.—Բնակատեղերը, առանձնապես գյուղական, դրադիրեն տարբերվում են յեվրոպականներից: Չինական գյուղը բաղկացած է սովորաբար 5—10—15 և մինչև 50 տնտեսությունից: 100 և ավելի տնտեսություն ունեցող գյուղերը բաղկանին հաղվադեղ են: Ծատ տարածված է տնտեսության ազարակային ձևը: Այս ազարակատնտեսղերը պատկանում են կուլակներին և ունեւոր գյուղացիներին ու հաճախ չրջապատված են հողե պարսպով, խունիուղներից պաշտպանվելու համար:

Գավառական քաղաքներն ունեն 5—10-ից մինչև 20—25 հազար բնակչություն: Համարյա յուրաքանչյուր գավառական քաղաք չրջապատված է հողե կամ աղյուսե պարսպով, դարպասներով և հրազենի համար հատուկ անցքերով, խունիուղների հաճախակի հարձակումներից տապապանվելու համար: Քաղաքների փողոցները սովորաբար նեղ են, լի խոտ և առանց սառահատակի: Քաղաքներում է կենարոնացած

համրող խոտերը, տեղական և դավառական արդյունաբերություններ. այն է 15—20 ջրաղաց, ձիթհանք, ողու գործարան և այլն, անալոգիկական և կիսատնայնագործական տիպի ձեռնարկները և կալիտուրական հիմնարկները՝ դպրոց, հիվանդանոց և այլն: Երկտրական լուսավորություն, հեռախոսներ կան միայն յերկրի կենտրոնին և կարևորագույն յերկաթուղիների գլխավոր դժերին մոտ ընկած (Չին-Արեվելյան, Հարավ-Մանջուրական յերկաթուղիներ) քաղաքներում:

Կենտրոնական և նահանգական կետերը (Մուկդեն, Սարբին, Գիրին, Յիցիկար) ներկայացնում են իրենցից խոշոր քաղաքներ, յեվրոպական շենքերով, երկտրական լուսավորությամբ, տրամվայով, հեռախոսով և այլն: Մուկդեն, Գիրին և Յիցիկար քաղաքները նույնպես չընդառնում են քառակուսի աղյուսե պարսպով, դարպասներով ու աշտարակներով: Այս քաղաքների առանձնահատկությունը, այսպես կոչված ոտարերկրյա թաղերի առկայությունն է, քաղաքի եվրոպական, ամենայնով մասերը, վորտեղ բնակվում են ոտարերկրացիները, ու գտնվում են բանկերը, գրասենյակները, առևտրական Ֆիրմաները և այլն: Այս քաղաքների չինական—տիպը, նվազ բարեկարգված մասերում կենտրոնացած են չինական զանազան մանր ձեռնարկներ, ֆերմաներ, արհեստանոցներ և բանվորական բնակարաններ:

Մանջուրիայի կարևորագույն քաղաքներից հարկավոր է մատնանշել հետևյալները՝

Մուկդեն.—Մանջուրիայի մայրաքաղաքը, ունի 350 հազար աղգաբնակություն: Յերկրի քաղաքական, առևտրա—արդյունաբերական կարևորագույն կենտրոնն է: Կան 50—ի չափ խոշոր ֆաբրիկներ ու գործարաններ՝ մեխանիկական, տեկստիլ, կաշու, ապակու, ծխախոտի և այլն: Ունի զինանոց՝ լավագույնը Չինաստանում, ակերդրում, վորն այժմ գոռով գրավված է ճապոնացիների կողմից, ռադիոկայան, համալսարան և մի շարք բարձրագույն և միջնակարգ դպրոցներ: Այժմ ճապոնական շտաբի բնակավայրն է:

Խաբին.—Ունի մինչև 300 հազ. բնակիչ: Հյուսիս. Մանջուրիայի քաղաքական և առևտրա—արդյունաբերական կենտրոնն է: Յերկրի բանվորական կենտրոնը: Կան 170—ի չափ խոշոր և միջակ արդյունաբերական ձեռնարկներ, (մեխանիկական, տեկստիլ, լայրաղաց և այլն): Հյուսիսային Մանջուրիայի կուլտուրական կենտրոնն է. ունի 4 բարձրագույն և 150—ից ավելի միջնակարգ և ցածր տիպի դպրոցներ: Սարբինում ապրում են 65 հազարից ավել ոտարերկրացիներ, նրանց թվում 40%—ից ավելին սուսներ են, վտարանդիներ: Սուսգարի գետի վրա յե գտնվում նավաչինարարական գործարանը (Սկոդի գործարանի բաժանմունքը):

Գիրին.—ունի 200 հազար բնակիչ: Գիրինի նահանգի մայրաքաղաքն է և առևտրա—արդյունաբերական կենտրոնը: Շատ զարգացած է փայտամշակման և արագացման արդյունաբերությունը:

Յիցիկար.—200 հազար բնակիչ: Խեյլունցյանի նահանգի մայրաքաղաքը և առևտրա—արդյունաբերական կենտրոնը: Կան դուրյառնական

կան մթերքների վերամշակման մի շարք խոշոր ձեռնարկներ (այրաղացներ, ձիթհանքներ և այլն): Նահանգի բանվորական կենտրոնն է:

Գայրեն.— ունի 280 հազար բնակիչ, վորոնցից 97 հազարը ճապոնացիներ են և 180 հազարը չինացիներ: Մանջուրիայի արդյունաբերական կենտրոնը: Խոշորագույն նավահանգիստն է Հեռավոր Արևելքում (2—րդը Շանհայից հետո): Բանվորական կենտրոն: Կան 60—ի չափ խոշոր ձեռնարկներ (10 մեխանիկական, 16 տեկստիլ, 20 քիմիական, սննդի և այլն): Կուլտուրական կենտրոնն է, ունի 50—ից ավել բարձրագույն, միջնակարգ և տարրական դպրոցներ: Նավահանգստի բեռնաշրջանառությունը հավասար է տարեկան մինչև 7 միլիոն տոննի: Գայրենի վրայով է անցնում Մանջուրիայի եկադրտի մեծ մասը:

Խայլար.—մոտ 100 հազար բնակիչ: Բարգալի վարչական, առևտրական և արդյունաբերական կենտրոնն է: Կա մեկ հատ շոգիալայ, ողու գործարան և կաշու, բոդի և այլ նյութերի վերամշակման մի շարք ձեռնարկներ: Խոշոր առևտուր է վարում մոնղոլական հումուսով, բրդով և մուշտակամազով:

Տաուն.—100 հազարի չափ բնակիչ: Առևտրա—արդյունաբերական կենտրոն է Մանջուրիային սահմանակից Մոնղոլիայի ներքին շրջանների համար: Կան մեծ քանակությամբ առանցքաբերական և կիսատնայնագործական ձեռնարկներ:

Նիսգալա (Նինան)—ունի 100 հազար բնակիչ: Գավառական քաղաքը և խոշոր առևտրա—արդյունաբերական կետն է Գիրինի նահանգի արևելելյան մասում. ունի 26 ձիթհան գործարան, 3 շոգիաղաց, 2 կաշեգործարան և այլն:

Ալսայլան.—10—12 հազար բնակիչ: Չինական Միքսոմուրյանի վարչական և առևտրա—արդյունաբերական կենտրոնն է: Ընկած է Ղմուր գետի վրա Բլադովեչենսկի դիմաց:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մանջուրիան հողագործական յերկիր է և նրա եկանոմիկայի հիմքը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը հավասար է յերկրի ընդհանուր արտադրանքի 90%—ին:

Արդյունաբերությունը նոր միայն զարգանում է և կենտրոնացած է գլխավորապես Հարավային Մանջուրիայում:

Պտղաբեր հողերի հսկայական տարածությունները և կլիմայական բարենպաստ պայմանները լայն հնարավորություններ են տալիս յերկրում գյուղատնտեսությունը զարգացնելու համար և նպաստում են տարրեր տեսակի հացահատիկային կուլտուրաների մշակմանը:

Հյուսիսային Մանջուրիան ունի հողագործության համար պիտանի 27 միլիոն հեկտ. հող, իսկ Հարավային Մանջուրիան՝ 10 միլիոն հեկտ.:

Ընդհանրապես Մանջուրիայի հողագործական ֆոնդը կազմում է ամբողջ յերկրի տերիտորիայի մոտ 32%—ը և մեծ է Իտալիայի ու Չեխոսլովակիայի տարածությունից:

Մանջուրիայի հողային ֆոնդը հողագործության համար ավելի լայն կերպով տգտագործվում է նրա կենտրոնական մասում (Սուսգարական հարթավայրը) ու Հարավային Մանջուրիայում և ամենքից պակաս

Հյուսիսային Մանջուրիայի ծայրամասերի շրջաններում (Բարգալում, Յիցիկարի շրջանում և այլն) :

	Ցանքերի տարած. 1000 հ.	Ցանքերի համար պիտան. խոտերի պաշարը 1000 հ.
Հյուսիսային մանջուրիա	9010	18,385
Հարավային »	7000	1670
Ընդամենը . .	16,010	20,055

Այսպիսով ցանքերի համար ավելի շատ հողի պաշարներ կան Հյուսիսային Մանջուրիայում : Իսկ Մանջուրիայի ցանքերի տարածությունն ալժամ արդեն անցնում է այնպիսի յերկրների ցանքերի տարածություններից, ինչպիսին է Գերմանիան (14 միլիոն հեկտար) և Ճապոնիան (10 միլիոն հեկտար) :

Հացահատիկների տարեկան բերքը 1928 թվին Հյուսիսային Մանջուրիայում հասավ 11.150 հազար տոննի, իսկ Հարավային Մանջուրիայում — 10.825 հազար տոննի :

Ամբողջ բերքի մոտ 30%-ը ավելի ընդեղենները՝ յերկրի ինչպես պարենավորման, այնպես էլ առևտրական մշակույթի : Այնուհետև գալիս են դառլյանը և կորեկի հացահատիկները : Յորենը ավելի ամբողջ բերքի միայն 6%-ը : Ընդեղենների միջին բերքատվությունը հավասար է 1600 կգ., դառլյանինը՝ 1920 կգ. մեկ հեկտարից :

Բերքի ամբողջ արժեքը պահանջարկում է 600 միլիոն դոլլարից ավելի :

Իր այդ ամբողջ բերքից Մանջուրիան նույն այդ տարին ուղարկեց արտասահման մոտ 5.300 հազար տոնն հացահատիկ և նրա վերամշակման մթերքներ (ընդեղենի յուղ, քուսպ, ալյուր և այլն) ընդվորում հացահատիկը (ընդեղենը, կորեկը) կազմում էր մոտ 60% -ը :

Հացահատիկների ավելի մեծ արտահանում տալիս է Հյուսիսային Մանջուրիան—ամբողջ բերքի մոտ 30%-ը :

Հողատիրության և հողագործման պայմանները.—հողերի մեծ մասը պատկանում է կալվածատերերին, խոշոր գինավորականությանը (բանակի գեներալներին), չինոմոնիկությանը, առևտրականներին և կուլակներին : Նրանք հողն իր ժամանակին եծան գներով գնել են կառավարությունից և յեռապատիկ թանգ ծախում են կամ վարձակալության տալիս դյուղացի-գաղթականներին—կոլոնիստներին ամենատարեկան պայմաններով, ընդվորում հողատերը վարձակալին տալիս է գործիքներ և շենք : Հաճախ այդպիսի վարձակալությունը կապված է լինում վարձատուի տնտեսության մեջ աշխատելու հետ :

Հողի վարձակալությունը լինում է բնանյութով և դրամով : Վարձակալ-դյուղացին հողատիրոջն է վճարում ամբողջ բերքի 50-ից մինչև 70, նույնիսկ ավելի տոկոսը : Սերմացվի փոխառությունը վերադարձված է կրկնակի չափով : Վոչ պակաս ստրկական պայմաններ են նաև դրամով վարձակալությունը :

Այսպիսով դյուղացին ստրկության է դնում կալվածատիրոջ մոտ և փաստորեն կիսաճորտական կախում ունենում նրանից : Կապալավարձը վճարելուց հետո դյուղացի-վարձակալին հաճախ այնքան քիչ է մնում, վոր նա ստիպված է լինում կիսաքաղց ստլրել և վաչխառական պայմաններով հաց և սերմացու վերցնել նույն այդ կալվածատերից :

Վարձակալությամբ վերցրած հողերի վրա ցանող դյուղացիական տնտեսությունները կազմում են Մանջուրիայում 25%-ից ավելին :

Գյուղացի-սեփականատերերը, իսկ նրանք Մանջուրիայում մոտավորապես 55—60%-ից ավել չեն, հաճախ այնքան քիչ սեփական հող ունեն (2—3—5 հեկտ.), վոր ստիպված են վարձակալությամբ հող վերցնել կալվածատերերից : Այդպիսի տնտեսությունները Մանջուրիայի ամբողջ տնտեսության 20%-ից ավելի չեն :

Խոշոր հողատերերն ունեն հաճախ 1000-ից մինչև 10.000 և ավել հեկտարի հասնող հող :

Մանջուրիայում գերիշխում է խոշոր հողատիրությունը : Սակայն՝ դրա հետ միասին նրանում համարյա թե չկա խոշոր հողագործություն մեծ կալվածատիրական այնպիսի տնտեսություններ, վորոնք տնտեսությունը վարեն կապիտալիստական հիմունքներով և այլն : Առանձին շատ թե չի խոշոր տնտեսությունները չեն անցնում 100—150 հեկտարից, սակայն դրանք էլ հաղվառել են : Հեռեապես Մանջուրիայում հիմնական հանդիսանում է մանր, փոչխացած, վարձակալական, կիսավարձակալական դյուղացիական տնտեսությունը՝ ճորտատիրական սովորույթներով :

Մանջուրիայի դաշտավարության տեխնիկան աչքի յե ընկնում դյուղատնտեսական ինվենտարի պարզությամբ ու եծանությամբ և պահանջում է մեծ չափով ձեռքի աշխատանք : Պտղափոխական ցանքաշրջանառությունը, առանց ցելի և հարքսի կիրառման, մարգային մշակույթը (մարգերով ցանքը), տարբերում են չինական դաշտավարությունը սովորական յեվրոպականից : Մեքենաների գործածությունը հաղվառելայ յերևույթ է : Վերջին տարիների ընթացքում սկսում է մուտք գործել խոպանի վարը տրակտորով :

Անասնապահությունը.—Մանջուրիան բավական հարուստ անասնապահական յերկիր է : Բուրգայում, յերկրի արեմտյան շրջաններում, վորոնք փոխվում են մոնղոլական անապատների, անասնապահությունը տնտեսության հիմնական ճյուղն է : Այս շրջանները Մանջուրիային տալիս են անասնապահական մթերքների հսկայական պաշարներ, վորոնք մեծ քանակությամբ արտահանվում են : Յերկրի մնացած մասում անասնապահությունը հանդիսանում է ոծանդակ միջոց հողագործության համար :

Տնային անասունների ընդհանուր թիվը հաշվվում է 15—16 միլիոն գլուխ, վորոնցից Հյուսիսային Մանջուրիային ընկնում է մոտ 60%-ը, վորի թիվում Բարգալին 13% : Ձիեր կան մոտ 2700 հազար գլուխ, փոչխաղ մոտ 2650 հազար գլուխ : Վոչխարները մոնղոլ—քոչվորների համար ծառայում են վորպես փոխանակման միավոր :

Անրատային գոտի.—Մանջուրիան չինախայտ է մատակարարում լիովին ամբողջ իր յերկաթուղիներին (չալաներ, սյուններ և այլն), ալ-

դյունաբերութեանը, բնակչութեանը, բաց իդրանից մեծ քանակութեամբ փայտ ելլ տարվում արտասահման, գլխավորապես Ճապոնիա:

Զբաղմունքները.—Յերկրում շատ դարգացած է մուշտակամաղա-գործութիւնն ու ձկնորսութիւնը: Ամեն տարի արտասահման է ուղարկւում 1—1½ միլիոն դոլլարի մուշտակամաղ:

Մանջուրիայի տնտեսական կյանքում բացառիկ դեր է խաղում ճապոնական կապիտալը:

Մանջուրիայի գյուղատնտեսութիւնը կարող է ամեն տարի արտահանելու համար տալ 5 միլիոն տոննից ավել գյուղատնտեսական մթերքներ: Այդ ավելցուկների ճշոյող մեծամասնութիւնը արտահանւում է ճապոնիա, վորը Մանջուրիայից ստանում է ընդեղեն, ընդեղենի յուղ, ջուտ (պարարտացման համար) և այլն: Անասնապահութեան արտադրանքը, վորը գնահատւում է տարեկան մոտավորապես յերեք միլիոն դոլլար և ավելի, նույնպես մեծ մասամբ գնում է ճապոնիա, վորը մանջուրական մսի գլխավոր սպառողն է: Այդ հումուլթը արտահանող ճապոնական կադմակերպութիւններում ներդրւած են բազմաթիւն դումարներ: Վերջապես ճապոնական կապիտալը լայնորեն մուտք է գործել նաև Մանջուրիայի անտառային տնտեսութեան մեջ: Նրան են պատկանում ամենահարուստ անտառները, կոնցեսիաներ Մեծ Խինգանում, «Չը-ժամյան կոնցեսիան Յիլիկարից արեւմուտք—Չին—Արեւելյան յերկաթուղու վրա, Չին—Արեւելյան յերկաթուղու արեւելքում՝ Մուզանցզյան գետի շրջան, Գիրինյան շրջանում և Յայու գետի վրա: Այս կոնցեսիաները լայնաբերութեամբ են շինւում, փայտաբարձ ճյուղերով և այլն և հսկայական շահ են տալիս ճապոնական կապիտալիստներին:

Ճապոնական կապիտալի շահերը Մանջուրիայի գյուղատնտեսութեան մեջ, գրանցւում են սահմանափակւում: Նա մուտք գործեց այնտեղ ազատ հողային տարածութիւնները կորեացիներով գաղութացման յենթարկելու միջոցով, վորոնք այժմ հաշվւում են յերկրում մոտ 1 միլիոն մարդ: Ճապոնիան մեծ գումարներ է ներդրել նաև կադմակերպելու համար իր գյուղատնտեսական ֆիրմաներ, կայաններ և այլն:

Ինչպես մենք կտեսնենք հաջորդ գլխում, ճապոնական կապիտալը, մտել է Մանջուրիայի արդյունաբերութեան մեջ ավելի խորը, քան դուրսնտնտեսութեան մեջ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ .

Մանջուրական գյուղատնտեսական հումուլթի հետ զուգընթաց, հարուստ է նաև տարբեր հանքերով: Առաջին տեղը նրանց մեջ գրաւում է քարածուխը, այնուհետև յերկաթը կա նաև պղինձ, արծաթ, արճիճ, ալբաստ, աղ, սոդա, նալթ այլն: Վերջապես Մանջուրիան հարուստ է և վոսկով: Վոսկեբեր ավազներ կան չյուսիսային Մանջուրիայի շատ տեղերում: Ամուր գետի մոտ, Բարգայում և այլն: Հանքերի հանուլթի մեջ կարեւորագույն տեղը բռնում են քարածուխը, յերկաթը, սոդան, աղը և վոսկին: Քարածուխի, յերկաթի և վոսկու հանուլթի տեսակետից, Մանջուրիան առաջին տեղն է գրաւում Չինաստանում:

Մանջուրիայի արդյունաբերութիւնը հիմնւած է գլխավորապես

գյուղատնտեսական բաղայի վրա մեծ քանակութեամբ հացատիկային և յուղաբեր հումուլթի, անասնապահութեան արտադրանքի և անտառների առկայութեամբ նպաստեց ալքաղացութեան, ձիթհանքի, կաշվի և փայտամշակման արդյունաբերութեան խիստ զարգացմանը:

Մանր արդյունաբերութիւնը նոր միայն զարգանում է նա համարյա ամբողջապես կենտրոնացած է Հարավային Մանջուրիայում և ամբողջովին պատկանում է ճապոնական կապիտալին:

Քարածխի արդյունաբերութիւնը բաղկացած է Հարավային Մանջուրիայում ճապոնական ֆուչանի ամենահարուստ հանքերից:

Նրանց գտնւում են Մուկդենից վոչ հեռու: Նրանց մշակման տարածութիւնը 47 քառ. կմ.—ից ավել է: Նրանցում ներդրւած է 120 միլիոն իրենից ավելի: Հանքերը սարքավորւած են տեխնիկայի վերջին խոտքի համաձայն: Այնտեղ կան ելեկտրոկայաններ, ելեկտրական ճանապարհ, գազի, կոկսի, վառուղի, բրիկետի, փայտափայտի և ուրիշ գործարաններ: Քարածուխի տարեկան հանուլթը 8 միլիոն տոննից ավելի է (քարածուխի ամբողջ հանուլթի մոտ 26%-ը ճապոնիայում), նրա մոտ 50%-ը արտահանւում է դեպի ճապոնիա: Բանվորները թիվը մոտավորապես 40 հազար է: Բացի դրանից՝ ճապոնական կապիտալին է պատկանում մի շարք ավելի մանր հանքեր:

Չյուսիսային Մանջուրիայում քարածուխն ստացւում է ավելի պակաս չափով, վոչ ավել քան տարեկան 600—700 հազար տոնն: Այս յերկրի հանքերից հարկավոր է նշել Մայինի հանքերը (Չին—Արեւելյան յերկաթուղու արեւելյան գծի շրջանում, Խանկա լճից դեպի արեւմուտք), Սուե-գարի գետի շրջանի հանքերը (այսպես կոչւած «Խաղիգանի հանքեր») Սանսինա քաղաքից դեպի չյուսիս: Այս հանքերը պատկանում են չինացիներին:

Վոլջ յերկաթագործական արդյունաբերութիւնը գտնւում է ճապոնացիների ձեռքում: Նրանց են պատկանում ամբողջ Չինաստանի խոշորագույն չուգունի ձուլարաններն ու մեխանիկական գործարանները Անչանում (Հարավ—Մանջուրական յերկաթուղու վրա), Բենսիխա (Մուկդեն—Անգանյան յերկաթուղու վրա), Դայրենում (Հարավ—Մանջուրական յերկաթուղու մեխանիկական արհեստանոցները):

Անչանի յերկաթագործական գործարանում ներդրւած է 40 միլիոն իենից ավելի: Գոյծարանի տարեկան արտադրանքը համապար և մոտ 300 հազար տոնն չուգունի, (չուգունի ամբողջ արտադրանքի 25—26%-ը ճապոնիայում): Գործարանն ունի 3 դոմնա և մի շարք լրացուցիչ ձեռնարկներ, 4 կոկսի գործարան, ծծմբաթթի գործարան, բենզոլի, գազի, ելեկտրոկայան և այլն: Բանվորները թիվը 6000 է:

Բենսիխուի գործարանում ներդրւած է 7 միլ. իեն: Տարեկան արտադրանքը՝ մոտ 50 հազար տ. չուգուն:

Այդ գործարաններում ստացւում են 700 հազար տոննից ավելի յերկաթի հանածոներ: Այսպիսով ճապոնիան Մանջուրիայում ունի բավականին նշանակալի վառելիք մետալուրգիական և մասամբ քիմիական բաղա:

Ճապոնացիների մնացած խոշոր արդյունաբերական ձեռնարկները Հարավային Մանջուրիայում ամենալավերն են ամբողջ յերկրում յեղած

ձեռնարկներին, նրանցում ներդաժ կապիտալը հասնում է 200 միլիոն իենից ավելի: Բանվորների ընդհանուր թիվն է 60—70 հազար:

Չինական խոշոր ձեռնարկները նշանակալի մասը, ինչպես Հարավային Մանջուրիայում, այնպես էլ մասամբ Հյուսիսային Մանջուրիայում, վորսեղ նույնպես կան ճապոնական վոչ մեծ ձեռնարկներ (Սարբինում), նույնպես կապված է ճապոնական կապիտալի հետ (Փոխառութուններ, ճապոնական բանկերի ֆինանսավորում և այլն):

Հարավ-Մանջուրական յերկաթուղու շնորհիվ ճապոնական վերահսկում է նրա հետ կապված մի շարք յերկաթուղիների: Հարավ-Մանջուրական յերկաթուղին հանդիսանում է տրանսպորտա-արդյունաբերական-առևտրական ուժեղ կոմբինատ: Բացի յերկաթուղային ցանցից, նրա կազմի մեջ մտնում են Ֆուշյան հանգիքը, գործարաններն Անշանում, Բեն-տրոկայաններ, Հյուրանոցներ և այլն: Նրանցում ներդաժ կապիտալն անցնում է 700 միլիոն իենից, յեկամուտը 250 միլիոն իեն, ծախսը 200 միլիոն իեն:

Հարավ-Մանջուրական յերկաթուղին իր բոլոր ձեռնարկումներով, վորի աղցիաների կեսից ավելին պատկանում է ճապոնիային, ճապոնա-թային քաղաքականութունը կենսագործելու համար:

Ի վերջո Մանջուրիան իր ֆինանսների առևտրի բնագավառում նույնպես յենթարկված է ճապոնիայի խոշորագույն բանկերի աղղեցութանը: Մանր արդյունաբերութունը Մանջուրիայում իր հետագա դարձացման համար խոշոր հեռանկարներ ունի: Քարածխի պաշարը յերկրում, ամենահամեստ հաշվով կազմում է 1¼ միլիարդ տոննից ավելի, յերկաթի հանածոները մենակ Հարավային Մանջուրիայում հավասար են մոտ 390 միլիոն տոննի:

Նավթի Մանջուրիայում ստացվում է բիտումնյան թերթաքարերից, Ֆուշյան հանքերում: Հանույթը կազմակերպված է ճապոնացիների կողմից և տալիս է նրանց տարեկան մինչև 60—70 հազար տոնն նավթ:

Աղի և սոդայի արդյունաբերական հանույթը Մանջուրիայում հասնում է մոտ 550 հազար տոննի: Վոսկին ստացվում է տարեկան միջին հաշվով 2—3 հազար կգ., գլխավորապես Հյուսիսային Մանջուրիայում:

Թեթև արդյունաբերութունը բաղկացած է գյուղատնտեսական մթերքներից վերամշակող ձեռնարկներից: Նրանցից կարևորագույններն ու խոշորագույնները գտնվում են Հարավային Մանջուրիայում—Դայրենում, Մուկդենում և համարյա ամբողջովին պատկանում են ճապոնական կապիտալին:

Հարավային Մանջուրիայում կան 700-ից ավելի յեկտրոպական տիպի ձեռնարկներ, նրանցից 217 ձիթհանք, և քիմիական գործարան, 172 սննդի, գլխավորապես ալրադացիներ, 109 մեխանիկական գործարաններ, արհեստանոցներ, 47 տեկտիլ և այլն: Այդ ձեռնարկների մեծ մասը կենտրոնացած է Դայրենում և Մուկդենում: Հարավ-Մանջուրական յերկաթուղու Դայրենի մեխանիկական արհեստանոցները խոշոր ձեռնարկներ են. բացի նորոգումներից, նրանք չինում են նոր չողեկառուներ և մեքենաներ: Հարավային Մանջուրիայի տարեկան ընդհանուր արտադրանքը կարող է մոտավորապես գնահատվել 140—150 միլիոն դոլար:

Հյուսիս. Մանջուրիայում արդյունաբերութունը ավելի պակաս է դարձացած, նրանում կան մինչև 125 չափ թիվ խոշոր ձեռնարկներ: Սուաչին տեղը նրանց մեջ բռնում են ալրադացիներն ու ձիթհանքերը: Նրանց մեծ մասը (մինչև ¾-ը) կենտրոնացած է Սարբինում: Մեխանիկական ձեռնարկներից հարկավոր է առանձնացնել Չին-Արևելյան յերկաթուղու գլխավոր արհեստանոցները Սարբինում, վորոնք ճանապարհի կարիքներն են սպասարկում:

Բացի վերը թված ձեռնարկներից Մանջուրիայում կան մեծ քանակութամբ տնայնագործական, կիսատնայնագործական գործարաններ, արհեստանոցներ (ձիթհանքներ, ողու գործարաններ և այլն) վորոնք սպասարկում են տեղական կարիքներին և պատկանում են գլխավորապես չինացիներին:

Բոլոր ասածներից կարելի յե յեղբակացնել, վոր հարավային Մանջուրիան, արդյունաբերական տեսակետից, ամբողջ Մանջուրիայի առաջատարն է:

Ռազմական պարագաներ պատրաստող ձեռնարկներից Մանջուրիայում կան՝ դինանոցը Մուկդենում, ինչպես նաև մի մասնավոր գործարան («Բոկսո») և վոչ խոշոր ռազմական արհեստանոցներ Գիրինում ու Յիցիկարում: Մուկդենի դինանոցը համարվում էր լավագույններից մեկը Չինաստանում: Նա արտադրում է փամփուշտներ, հրանոթներ, վառոդ, հրացաններ, գնդացիներ, ուժանետ գործիքներ: Նրան կից կա նաև թուրնավոր նյութերի մշակման բաժանմունք: Չինանոցն այժմ զբաղված է ճապոնական ուղուպացիոն գործերի կողմից:

Մանջուրիայի տնտեսութունն այժմ ապրում է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ կապված ծանր ճգնաժամ: Ճգնաժամը դիպել է առանձնապես դյուղատնտեսությանը, հետևաբար և արդյունաբերական այն ճյուղերին, վորոնք հիմնված են այդ բազայի վրա: Մանջուրիայում ընկնում է հացահատիկների գինը, կրճատվում հացահատիկի առևտուրը (էքսպորտը), ընկնում յերկաթուղիների յեկամուտը, կրճատվում ընդհանուր ապրանքաշրջանառութունը, նկատվում է կոլոնիատների ալիքի նվազումը և այլն: Ճգնաժամը ծանր կերպով է անդրադառնում գյուղացիության հիմնական զանգվածի, առանց այն էլ աղքատիկ բյուջեի վրա: Դուրթյուն ավելի խորացնում է հարավային Մանջուրիայի ճապոնական ուղուպացիան և ճապոնական ու չինական գործերի միջև կատարվող ռազմական գործողութունները: Նրանք հսկայական վնասներ են տալիս յերկրին:

Արտաքին առևտուրը.—Մանջուրիայի արտաքին առևտրի ընդհանուր չրջանառութունը 1929 թվին հասնում էր 364 միլիոն դոլարի:

Մանջուրիայի արտաքին առևտուրը տարբերվելով Չինաստանի պասսիվ առևտրից (ներանում գերակշռում է ներմուծումը) ակտիվ է իր հաշվեկշռով. նրա արտահանումը 1929 թվին հասնում էր 213 միլիոն իսկ ներմուծումը 151 միլիոն դոլարի:

Առաջին տեղը, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման մեջ Մանջուրիայում, բռնում է ճապոնիան—արտահանման մինչև 42—45%-ը այնուհետև Չինաստանը ու Յեկոպան:

Արտահանում է Մանջուրիան գլխավորապես ընդեղեն, ընդեղենի քուսպ, փայտ, քարածուխ և ներմուծում մանուֆակտուրա, պողպատե իրեր, մեքենաներ և այլն:

Մանջուրիայում, ինչպես և Չինաստանում ամբողջովին, իշխանութիւնը պատկանում է Փյոդալ-կալթատերերին, Փյոդալ-միլիտար-բիտներին, առևտրա-վաշխառուական բուրժուազիան։ Իշխանութիւնը նրանց հետ բաժանում է նաև արդյունաբերական բուրժուազիան։ Փաստորեն տիրող դուռթիւնը յերկրում պատկանում է ճապոնական իմպերիալիզմին, վորը Մանջուրիայում ազդեցութիւն ունենալու ասպարեզում Հ.Ա.Մ. նահանգների ախտանքն է։

Ղեկավար դերը յերկրի պետական կյանքում դրալում են խոշոր-կալթատեր հողատերերը՝ խոշոր չինուինիկները, գեներալները, վորոնք հսկայական հողամասեր ունեն։

Մանջուրիան, ինչպես և ինքը Չինաստանը տնտեսական-քաղաքական տեսակետից մի ամբողջութիւն չի ներկայացնում. նա բաժան-բաժան է արված մի շարք ինքնուրույն և կիսաինքնուրույն մարզերի, մոտավորապես մեկ նահանգի, իսկ յերբեմն լառանձին շրջանի մասշտաբով։ Նրանց դուռն են կանգնած, վորպես լիակատար տերեր, առանձին միլիտարիստական (ռազմական) խմբավորումներ։ Մինչև վերջին դեպքերը (մինչև ճապոնական ինտերվենցիան), Մանջուրիայում իշխանութիւնը պատկանում էր այսպէս կոչված Մուկդենի ռազմա-քաղաքական խմբավորմանը Չժան-սյուե-լյանի գլխավորութիւնով։ Այդ խմբավորումն ընդգրկում էր իր մէջ Սեյլանցիանի Վան-Փու-լինին և Գիլինի Չժան-ցզու-սյուեին։ Այս յերկու խմբավորումները յենթարկվում էին Չժան-Սյուե-լյանին այն չափով, ինչ չափով նրանց տնտեսական և քաղաքական շահերը Մանջուրիայում պաշտպանվում և չէին խախտվում վերջինիս կողմից։ Այդ խմբավորումների շուրջն էր հալոյալվում և միանում յերկրի առևտրական և արդյունաբերական բուրժուազիան։ Չժան-Սյուե-լյանը, Վան-Փու-լինը և Չժան-Յզու-Սյանը վոչ միայն խոշորագույն կալթատերեր են, այլ և Մանջուրիայի ամենահարուստ կապիտալիստները։ Նրանք տեր են արդյունաբերական ձեռնարկների, բանկերի, աղիցիաների յերկաթուղիների և այլն։

Չժան-Սյուե-լյանը և Մուկդենյան խմբավորման մնացած առաջնորդները իշխանութիւն հասան, հարստացան և խոշոր հողերի ու կապիտալների տեր դարձան շնորհիվ ճապոնական իմպերիալիզմի ոգնութիւն։ Մինչև վերջին տարիները նրանք ճապոնական իմպերիալիզմի հաւատարիմ հենարանն էին և նրա ազդեցութիւնն առաջնորդը Մանջուրիայում ու նրա հարեան Մոնղոլիայի և Հյուսիսային Չինաստանի շրջաններում։ Նրանց ոգնութիւնը ճապոնական իմպերիալիզմը իրագործում է յերկրի ստրկացումը և իր շահերը նրանում պաշտպանում ուրիշ իմպերիալիստների չար դիտաւորութիւններից (Հյուս. Ամ. միաց. նահանգ-ներ) և նրանց գործակալներից Չինաստանում (Չան-Կա-Շիի նանկին-յան վոհմակը)։ Սակայն վերջին տարիների ընթացքում Չժան-Սյուե-լյանը և Չժան-Յզու-Սյանը սկսեցին յերեան բերել ճապոնական իմպերիալիզմի խնամակալութիւնից ազատվելու ձգտումները։ Նրանք սկսեցին դիմել Հ.Ա.Մ. նահանգների ոգնութիւն, միանալով Նանկինի հետ Նրանց ոգնութիւնը և սեփական (Մանջուրական) բուրժուազիայի ճեղ-ման տակ Չժան-Սյուե-լյանը և Չժան-Յզու-Սյանը գլխավորում էին

Մանջուրիայում նոր յերկաթուղիների կառուցելու ճապոնական ծրագրերին և նրանց հակադիր՝ առաջադրում էին նրանց ծրագրերը, կառուցում իրենց ճանապարհները և այլն։

Այդ հանդամանքը չէր կարող մեծ անհանգստութիւն չալատառել ճապոնական իմպերիալիզմին։ Մի շարք անհաջող փորձերից հետո, ստիպել Չժան-Սյուե-լյանին զիջումներ անել (որինակ գեներալ Շի-Յու-Սյանի ապստամբութիւնը Չժան-Սյուե-լյանի դեմ. Հյուսիսային Չինաստանում 1931 թվի ամսոր), ճապոնիան 1931 թ. սեպտեմբերի գրովման յենթարկեց հարավային Մանջուրիան և (տապալեց) Չժան-Սյուե-լյանի, Չժան Յզու-Սյանի և ուրիշների իշխանութիւնը։

Ներկայումս ճապոնիան, վորն իր գործերով գրովման էր յենթարկել Մանջուրիայի կարեւորագույն շրջանները, վարում է յերկրին ել ավելի անդամահատելու քաղաքականութիւնը։ Յիցիկարում, Մուկդենում, Գիլինում ստեղծված «նոր» կառավարութիւնների գլուխ են նշանակված նրա կողմից հուսալի ու զիջող չինական «ղեկավարներ» և հեռացված են բոլոր հակաճապոնական տրամադրութիւն ունեցող տարրերը։ Այսպիսի միջոցով ճապոնական իմպերիալիզմը հույս ունի ապահովել իր տիրակալութիւնը Մանջուրիայում։ Սակայն նա ավելի հեռու յն դնում։ ճապոնական զինվորականութիւնը Չանչունում ստեղծել է համամանջուրական կառավարութիւն և յերկիրը վեր է ածում Չինաստանից անկախ «ինքնուրույն» պետութիւն, ուրիշ խոսքով վեր է ածում ճապոնական իմպերիալիզմի դադուրի*):

Դատակարգային և ազգային պայքարը։ Մանջուրիան կառավարող կալթատերերը Փյոդալ-միլիտարիստները, բուրժուազիան և նրանում տերութիւն անող ճապոնական իմպերիալիզմը յերկրում ստեղծել են ռազմա-Փյոդալական ռեժիմ և բանվորների ու ամբողջ աշխատավորութիւն համար ամենածանր պայմաններ։

Գործարաններում և Փարբիկներում բանվորների անողոր շահագործումը, աշխատանքի պաշտպանութիւն մասին որեւիների բացակայութիւնը, ձեռնարկներում գործադրվող վոստիկանական ռեժիմը, ցածր աշխատավարձը (տարեկան 50 կոպ. և ելի պակաս), չչափավորված բանվորական ուր (12. 14. 16. և ավել ժամեր), արձակուրդների բացակայութիւնը ցայտուն կերպով բնորոշում են չինական բանվորի աշխատանքի պայմանները։ Չափազանց լայնորեն և ոգտագործվում կանանց և յերեխաների աշխատանքը, վորը և չափազանց ցածր է վարձատրվում։

Մանջուրիայի բանվոր դասակարգի դրութիւնն այս բնահանուր դնահատականից միակ բացառութիւնը հանդիսանում է Չին-Արեւելյան յերկաթուղու յերկաթուղայինների ջոկատը։ Ճանապարհի վարչութիւն խորհրդային մասը, հակառակ չինականի, հալոսարեցրեց ուսու և չին բանվորի աշխատավարձը, լավ գրեց առողջապահութիւն գործը, մրտցրեց արձակուրդը և այլն։

Գլուխացիութիւն չքալոր և միջակ մասսաները, վորոնց մեծ մասը վարձակալութիւնը հողեր և վերցնում կալթատերերից ու կուլաններից ամենաստրկական պայմաններով և կիսաճորտական կալթման մեջ է կալթատերերից, ձուլված է քարշ տալ իր կիսաքաղց դոյութիւնը։

*) Այժմ արդեն Մանջուրիան իրեն հայտարարել է անկախ. Ծ. Խ

Իբ բերքի խոշոր մասը դյուղացին տալիս է կալվածատերերին, վորպես նրանից վերցրած հողի կապալավարձ: Բացի դրանից՝ նա յենթարկվում է բազմաթիվ հարկերի, տուրքերի և այլն, վորը վերցնում են նրանից նույն կալվածատերերն ու կուլակ-վաշխառուները, վորոնցից ստիպված է վերցնել փոխառվելիս սերմի համար և այլն: Վերջապես նրան թա- լանում է նաև հայ գնողը, վորը հացը վերցնում է կես արժեքով և այլն:

Գյուղացիության ծանր դրուկությունն ավելի խորանում է Մանջուրիա- յի գյուղատնտեսության ընդգրկած սուր ճգնաժամով և ճաղոնական զրավումով: Հացի գների անկումը մանջուրական շարքային գյուղա- ցուն ախպիսի դրուկյան մեջ է դնում, վոր նա վարձագինը, փոխառը- վությունները, հարկերն ու տուրքերը վճարելու համար ստիպված է վա- ճառել համարյա իր ամբողջ հացը, ինքը մնալ առանց հացի: Կարելի է ասել, որ ստիպում է չքավորին ու միջակին ծախել իր ապագա բերքը դեռ- ևս կանաչ վիճակում: Չքավորները թողնում են հողը, դառնում բա- րակներ, կամ թե դնում քաղաք աշխատանքի, վորտեղ նրանց սպասում է վաճառք բարելավ վիճակի: Միջակները պակասեցնում են ցանքերը և այդ- պիսով դառնում չքավոր: Յեվ այսպես կատարվում է մանջուրական գյուղացիության հողագուրդի դառնալու պրոցեսը:

Բնական է, վոր այս բոլորը տանում են դեպի դատակարգային պայ- քարի սրումը թե քաղաքում և թե գյուղում: Նա ընդհանրապես առայժմ անկազմակերպ բնույթ է կրում: Գյուղացիների պայքարն իրենց հա- րըստահարողներին և ճնշողներին դեմ վերջին ժամանակներս յերևան է գալիս արդեն դժգոհություն թափած մամանակներս յերևան է լիում են հացի ամբարները կալվածատերերից, խախտում և չնչալ հա- մարում ստրկացնող պաշտանագրերը, հրթառվում վճարել վարձա- գինը և այլն: Դրա հետ միասին պետք է ասել, վոր Մանջուրիայում ա- ռայժմ չկան գյուղացիական շարժման պարզ ու վորոշ դասակարգային նույնիսկ, ինչպես նաև գյուղացիության մեջ դեռևս անբավարար դա- սակարգային շերտավորմամբ: Հաճախակի գյուղացիական շարժումը Մանջուրիայում ունի յուրահատուկ ձևեր, ինչպես շարժման նման:

Բանվոր դասակարգն այդ անտանելի ծանր դրուկյանը պատասխա- նում է անտեսական բնույթի ընհարումներով: Այդպիսի ընհարումներ տեղի ունեցան Փուլանյան (ճապոնական) հանքերում, Մուկդենի մի շարք ձեռնարկներում: Բանվորական շարժման անբավարար ակտիվու- թյունը բացատրվում է արդյունաբերական պրոլետարիատի սակավա- րացված ցեխականությունով: Հիմ- քով:

Այդպիսի պայքարը Մանջուրիայում թույլ է արտահայտված: Չի- նացիք դուրս են գել համարյա փոքր տեղացի բնակչությանը: Այդպիսի առանձնահատկությունները պահպանել են միայն մոնղոլները—քոչվոր- ները Բարգոմ: Նրանց մեջ բավականին ուժեղ է ձգտումը դեպի ինք- նավարությունը: Այդ ձգտումը ոգտագործվում էր և ոգտագործվում է ճապոնական կապիտալի կողմից, վորը փորձում է մուտք գործել Բարգոմ: Այդպիսի թշնամությունը կորեացիների և չինացիների թիվն ուժգին կերպով հրահրվում և քորթոքվում է ճապոնական զինվորականության,

տեղացի բուրժուազիայի և գեներալական վոհմակներին կողմից, վոր- րոնք չահագորգում են յետ պահելու աշխատավոր մասսաներին, ստեղծ- ված անյեղանելի դրուկյան և բանվոր դասակարգի և գյուղացիության սղբատացման իսկական մեղավորներից:

Ճապոնական ինտերվենցիան ել ավելի վատթարացրեց Մանջու- րիայի բանվորական և գյուղացիական մասսաներին՝ առանց այն ել ծա- նըր դրուկյունը և անկասկած կնպաստի հեղափոխական արամագրու- թյան աճմանը նրանց մեջ:

ՁԻՆԱԿԱՆ ՈՒԹԵՐԸ

Մանջուրիայի գինված ուժերը, ինչպես և ինքը՝ յերկրը մի ամբող- ջություն չեն ներկայացնում, այլ բաժան-բաժան են արված մի շարք առանձին «բանակներ» և խմբերի և այլն, վորոնց զլուխ են կանգնած գե- ներալները: Հանդիմանավոր յերկրի աշխատավորական մասսաներին հնչելու գործիքը, նրանք, դրա հետ միասին, ծառայու մեն վորպես հե- նարան Մանջուրիայի միլիտարիստական ռազմական վոհմակի համար, ի- բագործելու իրենց յադարակային նպատակներն ու մատուցելու յանհո- րական հանդիսանում իրենց անձնական հարստացման սղբյուրը: Ինչ չափով այվելի հարուստ և ավելի սղբեցիկ է այս կամ այն միլիտարիստական խմբավորումը Մանջուրիայում, այնքան ավելի լավ է գինված նրա բա- նակը:

Յերկրի գինված ուժերի ներքին կառուցվածքը մոտ է միջնադարյան ֆեոդալների բանակներին կառուցվածքին. նրանք համալրացվում են վարձելու միջոցով. նրանց կառավարչությունը ապակենտրոնացած է գինվորների մասան՝ դա խաչաքարե մարզկային խումբ է քաղաքա- կան-բարոյական վիճակի ցածր մակարդակով և այլն:

Մինչև վերջին անցքերը Մանջուրիայի գինված ուժերը բաղկացած էլին առանձին միլիտարիստական խմբավորումների հետևյալ դրքե- րի:

Խեյյուցցյանի	— գեներալ Վան-Փու-Լին՝ մինչև 40 հազար մարդ.
Գիբինի	— գեներալ Չիան-Յո-Սյան՝ մինչև 60—70 հազար մարդ.
Մուկդենի	— գեներալ Չիան-Սյու-Լյան՝ մինչև 150 հազար մարդ.
Ֆեյսեյի	— Տան-Յու-Լին՝ մինչև 40 հազար մարդ:

300 հազար մարդ.

Այս բոլոր զորքերը ձևականորեն յենթարկվում են Չիան-Սյու-Լյու- ին, վորպես խոշոր «բանակի» «զլխավոր հրամանատարի» և «տիրոջ»: Նրանք բաղկացած էլին 32—33 հետևակի, 10—11 հեծյալ բրիգադներ- րից, 12 հրետանային գնդից և մի քանի սակրավոր, յերկաթուղային գումարտակից և ուրիշ ոժանդակ մասերից: Բանակն ուներ զրահատան- կային մասեր, բաղկացած մինչև 30 տանկերից (փոքր Ռենո և միքանի «Վիկկերս»), մոտ 40 զրահավորումորի, 50—60 մարտական ինքնա- թիռներ, բացի դրանից 20—30 վարժական և այլ ինքնաթիռներ: Տեխ- նիկական այս միջոցներն ամբողջովին մոտում էլին Մուկդենի նահանգի Չիան Սյու-Լյանի զորքեր կազմի մեջ և նրանք բոլորն անցյալ տարվա սեպտեմբերին, զբաղվեցին ճապոնացիների կողմից Մուկդենում: Ման-

Ջուրիայի նահանգի մնացած զորքերը (Գիրիսի և մյուսների), բացի հրետազորից (1-ական հրետանային գունդ) կռվի ժամանակակից տեխնիկական միջոցներից վրձին չունենին։

Այն ժամանակամիջոցում, վոր անցել է Հարավային Մանջուրիայի ճապոնական ուղեւորների սկզբից մինչև ներկա մոմենտը, մանջուրական բանակը զգալի կորուստներ է կրել։

Մուկդենում ճապոնացի հափշտակել են բանակի համարյա վողջ տեխնիկան, շտաբներն ու նրա հիմնարկները, զինանոցը, ռազմական պահեստները և մեծ քանակությամբ ռազմական գույք Գիրիսում և այլ կետերում։

Ճապոնական ուղեւորների հետևանքով Մանջուրիայի բանակը զրկվել է համարյա ամբողջ նյութական բազայից։

Ներկայումս բանակն ունի վոչ ավել քան 220—230 հազար մարդ, վորից մոտ 150 հազարը գտնվում է Մանջուրիայի սահմաններից դուրս—Հյուսիսային Չինաստանում (Պեկին—Տյանցզինի շրջան)։ Այստեղ ևն կենտրոնացած բանակի հիմնական կազմերը—Լյաոնինի (Մուկդենի) նահանգի Չժան—Սյուեի-լյանի զորքերը, ինչպես նաև Թեխե նահանգի զորքերը։

Կազմակերպությունը և կազմը

Բանակում բարձրագույն զորական միավորությունը բրիգադն է, ինչպես հետևակ, այնպես էլ հեծյալ։ Հետևակ բրիգադի նորմալ կազմն է՝ 3 հետևակ գունդ, շտաբային մասեր (ուղեկցորդ վաշտ, կապի գասակ կամ վաշտ և այլն)։ Միջանի բրիգադներ ունեն մեկական թեթև կամ լեռնային մարտկոց (4—6 հրանոթ) կամ 37 մմ. թնդանոթների մեկական մարտկոց։ Գունդը սովորաբար ունի 3 դումարտակ, գնդացրային և ուժանետ զորախմբերի. դումարտակը բաղկացած է 4 վաշտից։ Բրիգադները ընդհանուր թիվը հասնում է 6—7 հազար հոգու 24—36 հատուցային զնդացիներով, 24 ուժանիտներով և յերբեմն 4—6 թեթև հրանոթներով։ Կան նաև աշտպես կոչված խառը բրիգադներ, վորոնց կազմի մեջ մտնում են 1—2 հետևակ գունդ և 1 հեծելազույն։ Այսպիսի բրիգադները գլխավորապես տանում են թիկունքի, յերկաթուղիների պաշտպանությունը, և ներքին կարգապահությունը։

Հեծյալ բրիգադն ունի շտաբային մասեր, 3 հեծելազույն և յերբեմն գնդացրային ու մեկ ամրանիտ հեծելալաշտ։ Հեծելազույնը բաղկացած է 4 թրավոր հեծելալաշտից, մեկ գնդացրային և մեկ ուժանետ հեծելալաշտերից։ Գնդի թիվն է 500—600 թուր, բրիգադինը՝ մոտ 2000 մարդ, ունենալով 18—24 հատուցային զնդացիներ, մոտավորապես նույն քանակությամբ էլ ուժանետներ։

Հրետանային գունդը (թեթև և լեռնային), բաղկացած է 9—4 հրանոթային մարտկոցից, ընդամենը 36 հրանոթ։ Բանակում կա 2 ծանր հրետանուդ, 6-ական մարտկոցով յուրաքանչյուրում (4 հրանոթանոց)։

Մակրավոր, դումակային և այլ զորամասերի կազմակերպությունն առանձնապես վրձնով չի տարբերվում համալսարհային պատերազմի շրջանի նրանց կազմակերպությունից։

Ջրահատանկային մասերը (ճապոնացիների հափշտակած) դարձրած են առանձին ջոկատներ։

Սպառազինումը և ռազմական պարագաները։ Նկատի ունենալով, վոր Մանջուրիան սեփական և զարգացած ռազմական արդյունաբերություն չուներ, բանակի մատակարարումը զինքով, ռազմական իրերով և այլն կատարվում էր և կատարվում է ի հաշիվ արտասահմանյան գնումների։ Մուկդենի զինանոցը, վորն այժմ զբաղված է ճապոնացիների կողմից և լավագույնն էր համարվում Չինաստանում, չր կարող իր արտադրանքով (ամսական մոտ 3000 հրացան, 3—5 միլիոն փամփուշտ, 20 գնդացիր և միջանի հրանոթ) բավարարել 300 հազարանոց բանակի պահանջները։

Արտասահմանում՝ ճապոնիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և ուրիշ յերկրներում գտնվում էյին հրանոթներ, գնդացիներ, հրացաններ, արկեր, փամփուշտներ, ինքնաթիռներ և այլն։

Դրա համար էլ այդ ձևով ու կարգով մատակարարվող բանակի սպառազինումն աչքի յե ընկնում զինքի տիպարի, սխառմի և կաշիքի մեծ զանազանակերպությամբ։ Հետևակ և հեծյալ մասերն ունեն հրացաններ՝ Արիսակ (ճապոնիա), Մաուզեր (գերմանական և չինական տիպարի) Մանլիխեր և այլն, գնդացիներ՝ Մակսիմ, Կոյլա, Հոչկիս Լյուիս և ուրիշներ։

Հրետազորում՝ ուստական 3 դմ. հին թնդանոթներ 48-դմանի հորիցներ, ճապոնական 75 և Կրուպկի 75 միլիմետր թեթև ու լեռնային թնդանոթներ, Կրուպկի 6 դյմ. հորեցներ և ուրիշները։ «Ստոկսի» 76 մմ. և 87 մմ. հրասանդներ և այլն։

Ավիացիան ուներ Պոսեդի, Բրիգեյի (Ֆրանսական), Կոդրոնի և ուտարերկրյա ուրիշ սխառմաներ ինքնաթիռներ։

Հետևադորի և հեծելազորի սպառազինումը, վորը կազմված է հրաձգային զինքի շատ թե քիչ ժամանակակից տիպարներից, հարկավոր է ընդհանուր առմամբ բավարար համարել։ Հրետազորը զգալի կերպով վատ է սպառազինված (հրանոթների հնացած տիպարներ)։ Բանակում մեծ չափով տարածված են Ստոկսի հրասանդները։

Սակրավոր, կապի և յերկաթուղային զորքերի նյութեղեն մասը նույնպես մեծ մասամբ ոտարերակրյա ծաղում ունի։

Չորքերի զրամական և մթերքների բավարարման և զգեստաւորության մատակարարումն ընդհանրապես վատ է դրված։ Ռոճիկը միանգամայն անկանոն է վճարվում։ Չինվորն ամսումն ստանում է 8—10 ուլբի (մեր դրամով), վորից համարյա կեսը պահվում է կերակրվելու համար (չինական զինվորը կերակրվում է իր հաշիվն—արտելական կարգով)։ Չինվորները հաճախ 2—3 ամսով բոլորովին ուժիկ չեն ստանում։ Ռոճիկը կամ պահվում է կամ թե ուղղակի գողացվում մասերի հրամանատարների կողմից։ Արքունի գանձարանի կողոպտումը մասերի հրամանատարների կողմից, շատ տարածված յերևույթ է բանակում։

Չինական զինվորը ծայր առտիճան աղքատ է կերակրվում։ Մի սակավ է ստանում և սննդվում է առավելապես բանջարեղենով, հացահատիկային մթերքներով։ Նրա որպարենն իր կալորիականությամբ համարյա կիսով չափ պակաս է յեվրոպական զինվորի որպարենից։

Չինական զինվորը, կանոնադրութեան համաձայն, զոգեստ ստանում է տա-
րեկան 2 անգամ (ամառային և ձմեռային) :

Բանակի ընդհանուր ծախսերը կանոնաւ են Մանջուրիայի ամբողջ
բյուջէի կէտից ավելին և բնական է, վոր ամբողջ ծանրութեամբ ընկնում
են յերկրի աշխատավորական մասսաների ուսերի վրա :

Պատրաստութեանը : Ձորքերը մինչև այժմ էլ սովորեց-
վում են համաշխարհային պատերազմի ժամանակները կանոնա-
դրութեաններով (զերմանական և ճապոնական վերամշակված կա-
նոնադրութեանները) : Այդ պատճառով չինական զորքերի մար-
տական գործողութեանների տակտիկական ձևերում շարունակում
է տիրապետել չին դժային տակտիկան : Հարձակումը վար-
վում է խիտ շղթաներով, առանձնացնելով ուժեղ պահեստներ (վողջ ուժ է
բի մինչև 2/3 մասը), հարվածականութեանը բացակայում է . կրակի է
գորաշարժի զուգակցութեանը անշնորհ է, հետախուզութեանը մինչև
մարտը և մարտի ժամանակ կրում է պասսիվ բնույթ և վերածվում հա-
սարակ զինողութեան :

Հեծելազորը վարում է ավելի հետևակ մարտ և հետախուզել չգիտե :
Հրետազորը թույլ է ոգտադրվում, նա պահվում է վերջնական հեռա-
կայութեան վրա և զորաշարժեր կատարել չգիտե : Հրամանատարութեանը
պահում է խնայում է հրետազորը, նկատի ունենալով նրա սակավաթվու-
թեանը :

Պաշտպանութեանը տարվում է բազականին լավ . դա բանակը ուժեղ
կողմն է : Սակայն պաշտպանութեան մեջ էլ նկատվում է բանակի հետա-
մնացութեանը ռազմական գործի ժամանակակից պահանջներից (զորքերի
դասավորման դժավարութեանը դիրքերում, հրետանա կուտակման բա-
ցակայութեանը, կրակը զորաշարժերի հետ զուգակցելու անկարողու-
թեանը, պահեստի ոգտադրվումը մասերով) : Պաշտպանվելու իր համե-
մատական կարողութեանը բանակը ցույց տվեց Յիցիկարի տակ 1931 թ
նոյեմբերին ճապոնացիներին դեմ վարած կռիվներում : Նշանակալից չա-
փով գիշերով ճապոնացիներին տեսնելուց և տակտիկական պատրաս-
տութեան մեջ, խեղճեցվան նահանգի զորքերը ղեներալ Մա—Չֆան—
Շյանի հրամանատարութեամբ, մի քանի օր, շատ համար պաշտպանեցին
Յիցիկարի մատույցները և մեծ կորուստներ պատճառեցին ճապոնացիներ-
ին :

Ընդհանուր առմամբ, բանակի տակտիկական պատրաստութեանը կը-
րում է մարտական գործողութեանների ժամանակակից ձևերից հետ մնա-
լու բոլոր հետքերը (խմբային տակտիկա) : Դրա հիմնական պատճառը
նախ և առաջ հենց իրեն բանակի ներքին կառուցվածքի մեջ է, վորը մոտ
է միջնադարյան Ֆեոդալների զորքի կառուցվածքին : Սպաների ռազմա-
կան պատրաստութեան ցածր մակարդակն ընդհանրապես (բանակում յե-
ղած մոտ 141/2 հազար սպաների ընդհանուր թվից, բարձրագույն զինվո-
րական կրթութեամբ կան վոչ ավել քան 150—200 մարդ) չինական զոր-
քերի տակտիկական պատրաստութեան թուլութեան կարևոր պատճառ-
ներից մեկն է : Սպաների մեծ մասն աճել ու դաստիարակվել են Չինաս-
տանի քաղաքացիական պատերազմի պայմաններում և նրա փորձերով
էլ ղեկավարում են զորքերը պատրաստելիս :

Բազալական — բարոյական վիճակ : Մանջուրիայում ընդհա-
նուր զինապարտութեանը դրույթուն չունի : Նրա բանակը լար-
ձու յե և համարվում է կամավոր հավաքագրման միջոցով :
Նկատի ունենալով, վոր քաղաքի և գյուղի աշխատավոր բնակչու-
թեանը համարյա թե կամավորներ չի տալիս բանակին, դրա համար վեր-
ջինս համարվում է գլխավորապես սպադասակարգայնացած և վոչ պրո-
լետարական տարրերով (քաղաքացիական պատերազմից քաղաքված դյու-
ղացիներ, գործադուրդներ, վորոնք բանակ են մտնում բացառապես կա-
րիքից ու քաղցից ստիպված) : Բանակում շատ կան քրեական տարրեր և
խուճխուղներ, վորոնց նրա շարքերն են գրավել բնակչութեանն անպատիժ
կողոպտելու հնարավորութեանը (կենցաղային յեթելույթ բանակում) :
Մասայութեանը բանակում, վերջին հաշիվով, զինվորի համար դառնում
արհեստ և հանդիսանում գոյութեանը պաշտպանելու աղբյուր :

Հասկանալի յե, վոր բանակի քաղաքա—բարոյական վիճակը, վորը
համարված է այդպիսի տարրերից գտնվում է չափազանց ցածր մակար-
դակի վրա : Չինվորին միանգամայն ոտար են Մանջուրիան կառավարող
վոհմակների նպատակներն ու խնդիրները : Չինվորների մեջ կան մեծ թը-
վով անգրագետներ, նյութապես վատ ապահովվածներ, դարգացած է դա-
սալքութեանը—հաճախ ամբողջ ստորաբաժանումներով, մարտդրութեանը
նր, բնակչութեան թալանելը և այլն : Միայն դավադանի դիտելովինան
և հանցանքի համար խիստ պատիժներն այսպես թե այնպես պահում են
զինվորներին բանակում և ստիպում ծառայել իրենց ղեներալներին—տե-
րերին :

Մանջուրիան կառավարող վոհմակի համար ավելի հավատարիմ
վարձկան հանդիսանում է բանակի յենթասպայական կազմը, նույնպես
խալաբղետ (յենթասպաներ կան զինվորներից, վորոնք այդ կոչումն
ստացել են կռիվներում աչքի ընկնելու պատճառով, խուճխուղական հրո-
սակալածների պարագլուխներից, յենթասպայական դասընթացներն ա-
վարածներից) : Նա ունի մի շարք արտոնութեաններ (ավելի ուժեղ է
ստանում քան զինվորը և այլն) և ավելի ուշադիր է ընտրվում :

Սպայական կազմը մեծ մասամբ բաղկացած է քաղաքային և գյուղա-
կան խոշոր ու միջին բուրժուազիայի, չինուինիկական և բուրժուական ին-
տելիգենցիայի ներկայացուցիչներից և կազմում է յերկիրը կառավարող
դասակարգերի հիմնական հեռաբանը բանակում : Բանակի վերնաշերտը
նրա ղեներալները (Չֆան—Սույե—Լյան և ուրիշները) բաղկացած է
խոշոր Ֆեոդալ—կալվածատերերից, հակայական հողերի, առևտրա—ար-
դյունաբերական ձեռնարկների տերերից, բանկերից ու յերկաթուղային
ընկերութեաններից փալատերից և այլն : Չգալի է նաև սպաների խավը
բանակում, բնակչութեան մանր բուրժուական շերտերից և յենթասպանե-
րից դուրս յեկածներից : Սպաների այդ մասը Մանջուրիայի ղեներալա-
կան վոհմակի հուսալի և հավատարիմ հեռաբանը չէ : Բորձը սպայութեան
նրա հետ արժամարհական վերաբերմունքը և սուհասարակ նյութական
անբարեկեցիկ վիճակը այս բոլորը առաջացնում են բազականին անտար-
բել վերաբերմունք դեպի բանակի վերնաշերտի նպատակներն ու ձգտու-
մները : Միայն ծառայութեան մեջ մի քիչ առաջանալու և գլխավորապես
հարստանալու հնարավորութեանը ստիպում է սպաների այդ կատեգո-
րիային ծառայել բանակում :

Բացի ցամաքային զինված ուժերից՝ Մանջուրիան այժմ ունի ռազմածովային և ռազմադեռային փոքր ուժեր։ Ռազմածովային ուժերը բաղկացած են մի քանի հնացած թեթև հածանավներից (մեկը 4800 տ. 1897 թվի կառուցվածքի, յերկուսն էլ ամեն մեկը 2900 տ. 1898 թվի կառուցվածք), եսկազրային ականակիրներից և հրետանիներից։ Նավատորմի բազան հանգիստանում է Յինգաո նավահանգիստը (Շանդանի նահանգ)։ Ռազմադեռային ուժերը բաղկացած են այսպես կոչված Սանգուրյան գետի նավատորմից։ Նկատի ունենալով, վոր 1929 թ. Չինաստանը յերկաթուղու անցած կոնֆլիկտի ժամանակ նավային կազմը կորուստ ունեցավ, այժմ նա դառնում է վերականգնման շրջանում։

Ռազմածովային ուժերի կազմի մեջ և մտնում նաև հիդրոօդային ուժերի մի փոքրիկ ջոկատը։

Այսպիսով՝ Մանջուրայի զինված ուժերը փայլուն դրուժյան մեջ չեն, վորը և հեշտացրեց ճապոնական զորքերի հարավային Մանջուրիան դրավելն ու այժմ այդպես տերութուն անելը, ինչպես իր տանը։ Դեռևս ավելին. ճապոնական զինվորականութունը՝ կաշառելու և խոտուածնելի միջոցով ոգտագործում էր Մանջուրական առանձին գեներալների զորքերը կռվելու համար այն միլիտարիստական խմբավորումները գեմ, վորոնք փորձում էին և փորձում են այժմ դիմադրութուն ցույց տալ։ Այսպես որինակ, ճապոնիան ոգտագործում էր գեներալ Չժան—Սայպինի զորքերը Սեյլունցյանի գեներալ Մա—Չժան—Շյանի զորքերը գեմ կռվելու համար Յիցիկարի տակ)։ Նույն բանն արեց նա այս տարվա հունվարին Սարբինի տակ, ոգտագործելով իր նշանակված գեներալ Սին—Այալի զորքերը Սարբինը պաշտպանող Դին—Չաոյի զորքերի գեմ։

Բացի կանոնավոր զորքերից Մանջուրիայում գոյութուն ունի յուրահատուկ և բավականին բազմամարդ ռազմական կազմակերպութուն փորը կրում է «Բաովեյ տուան» չինական անունը, կամ «գյուղական ինքնապաշտպանության զորքեր»։ Իր էյությամբ Փալիստական այդ կազմակերպության հիմնական նպատակն է պաշտպանել գյուղական և քաղաքային բուրժուազիայի շահերը։ Այդ կազմակերպությունը պահվում է գյուղացիների հաշվին (հատուկ հարկ) և ծառայում է գյուղացիների ու բանվորների ամեն տեսակի դժգոսությունները ճնշելու (ոգնում է զորքին և փոստիկանությանը) և խուսափելի գեմ պայքարելու համար։ Դեկափարվում է գաղտնագետների կողմից։ Հրամկազմը բաղկացած է մեծածառամբ նախկին սպաներից։ Կազմակերպության անդամները զինված են տարբեր տեսակի հրացաններով, վորը ստանում են ռազմական գերատեսչութունից։ «Բաովեյ տուան»-ը ամբողջ Մանջուրիայում ունի ավելի քան 100 հազար անդամ։

ՀԱՊՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՅԱՆ

Ինչպես տեսանք, ճապոնական կապիտալը մուտք է գործել Մանջուրական տնտեսության բոլոր բնագավառներն ու ճյուղերը և գրավել բոլոր իշխող բարձրույնները նրա եկոնոմիկայի մեջ։

Մոտավոր հաշվով, Մանջուրիայում ներդրած ճապոնական կապիտալի բնականոր դուժարը հասնում է 11/2 միլիարդ իենի։

Չինական վիճակագիր—տնտեսագետների հաշվով այդ կապիտալի չափը հավասար է տարեկան 250 միլիոն իենի, ուրիշ խոսքով Ման-

ջուրիայի յուրաքանչյուր բնակիչ վճարում է ճապոնական իմպերիալիզմին տարեկան 7—8 իեն հարկ։

Այսպիսով ճապոնական իմպերիալիզմը արդեն այժմ ունի Մանջուրիայում բավականին նյութական բազա, իրագործելու համար յերկիրը վերջնականապես ստրկացնելու իր հետագա ծրագիրը։

Ինքնին հասկանալի չէ, վոր ճապոնական կապիտալի արմատացումը Մանջուրիայում կատարվում էր և կատարում է կապիտալիստական ուրիշ յերկրների հետ սուր պայքարի պայմաններում։ Այդպիսի ախտյան ճապոնիայի համար հանդիսանում է առաջին հերթին նոր շուկաներ փնտրող ամերիկական կապիտալը։

Իր արմատացումը Մանջուրիայում նա անց և կացնում տեղացի (Մանջուրական) բուրժուազիային ֆինանսավորելու և ոժտնդակելու միջոցով, ոգտագործելով ճապոնական կապիտալի հորատոյն «ինտամատությունից» աղաավելու նրա փորձերը։ Մանջուրական բուրժուազիան ամերիկական կապիտալի ոգնությամբ իր դիմադրությունն էր ցույց տալիս ճապոնացիներին գլխավորապես յերկրում յերկաթուղիներ կառուցելու դործում, միաժամանակ մերժելով ճապոնացիներին նոր յերկաթուղիների կառուցումը Մանջուրիայում։

Այս պայքարն առանձնապես դրեկվորից վերջին տարիների ընթացքում։ Չինական կապիտալիստները ամերիկացիների դրամական ոժտնդակությամբ, վորը կառածից դուրս է և ճապոնացիների ուժեղ դիմադրության պայմաններում կառուցեցին իրենց մի շարք յերկաթուղիներ Սուլայի (հյուսիսային Սարբին), Յիցիկար—Կեչան, Դախուչան—Ռունկյաո (Մուկդեն—Պեկին ճյուղը), և Մուկդեն—Պեկին։ Չինացիները ժամանակ մշակեցին այդ ճանապարհները Սարբինին, հյուսիսային Մանջուրիայի կարեկորագուն կետերի հետ միացնելու պլանը (Սախալյանի հետ՝ Մուկդենի վրա և Սանսինի հետ՝ Մուկդար գետի վրա) և 1930 թվին ձեռնարկեցին Սուլադաո սեփական նավահանգստի կառուցմանը (Լյոդունայն ծովածոցում) նպատակ ունենալով խուսափելով Դալբեն նավահանգստից, յեղ տալ Մանջուրական ճանապարհներին դեպի ծովը։ Սրա հետ միասին չինացիներն ամեն կերպ արգելակում էին ճապոնացիներին՝ իրենց կարեորագուն յերկաթուղիներ կառուցելը՝ Գիլին—Կայնից և չեյին համաձայնվում նրանց նոր ճանապարհների կառուցմանը Մանջուրիայում։

Այս բոլորը, ինչպես նաև Մանջուրիան կորեացիներով և այլ ձեռնարկումներով գաղութացման յենթարկելու (ճապոնական բեզիդենտի իրավունքների ընդլայնում) ճապոնական ընդարձակ ծրագիրների դիմադրությունը չինացիների կողմից, ճապոնական բուրժուազիան ընդունեց վորպես չեչտակի սպառնալիք ճապոնական կապիտալի համար Մանջուրիայում և նրա հետագա արմատացմանը յերկրում։

Ճապոնիայի զինված յելութը Մանջուրիայում՝ չի կարելի անսպասելի համարել։ Նա վաղորդ էր պատրաստված։ Մանջուրիան գավթին ու իր գաղութ դարձնելը վաղուց արդեն գրված էր ճապոնական իմպերիալիզմի կողմից, վորպես առաջնակարգ և գլխավոր ինդիլ տախկան մայրցամաքում։ Համալսարհային ճգնաժամը, վորը ցնցեց նաև ճապոնիային, արագացրեց միայն այդ յելութը։

Ճապոնիայի ամենալուրջ մրցակիցները հեռավոր սրենքում, Հ.Ս.

Մ. Նահանգները, Անգլիան և ուրիշ «մեծ պետությունները», վորոնք բռնիված են տնտեսական սոսկալի ճգնաժամով, չեն կարողանում և չեն ուզում այժմ խանդարել ճապոնական իմպերիալիզմին Մանջուրիայում: Ընդհակառակը, այն չափով, վոր Մանջուրիայի գրավումը սպառնալիք է ստեղծում ԽՍՀՄ-ի համար, ճապոնական իմպերիալիզմը լիակատար անկողով աջակցություն և ստանում ամբողջ կապիտալիստական աշխարհի կողմից:

Յեռուստին իբրև առիթ, ճապոնացիները առաջադրեցին մի շարք մեղադրանքներ Մանջուրական իշխանություններին և չինական զորքերին վոր նրանք խախտել են ճապոնական ադդարնակություն չափերը և բռնություններ են գործ դրել իրանց դեմ, փաստներ հասցրել հարավ—Մանջուրական յեկաթուղու, մանավանդ, վոր իբր թե չինական զինվորները սպանել են ճապոնական մի սպայի, վոր «ճանապարհորդելիս և յեղել» Տաոնան—Սոլուն յեկաթուղու շրջանում, Մուկդենի մոտ քանդել են հարավ—Մանջուրական յեկաթուղու գծերը, հարձակումներ են գործել կորեացիներին վրա և այլն և այլն: Այսպիսի, շատ բաներում կասկածելի փաստերով, ճապոնական զինվորականությունը, չխուսափելով վոր մի պրովակացիայից, ուզում եր ուրիշ յեկրներին «հասարակայնություն» առաջ արդարացնել իր նախորդ պատրաստած յեռուստը Մանջուրիայում:

ճապոնական զորքերի գործողություններն սկսվեցին 1931 թվի սեպտեմբերի 19-իցիչերը: Հետևակ զինվորային և հարավ—Մանջուրական յեկաթուղու պահպանական բրիգադի մասերը, վորոնք գտնվում էին հարավային Մանջուրիայում վորպես մշտական ճապոնական կայազոր, համարյա թե միաժամանակ և անսպասելի կերպով գրավեցին կարևորահամարյա թե միաժամանակ և անսպասելի կերպով գրավեցին կարևոր կետերը՝ Մուկդենը, Չանչունը, Ինկուն, Ալդուն: Չինական տեղական

կայազորները թույլ զիմպուրություն ցույց տվին ճապոնացիներին և զինաթափվեցին նրանց կողմից: Մուկդենում և ուրիշ կետերում ճապոնական զորքերը գրավեցին չինական բանկերը, հիմնարկները, զինանոցը, զենքի խոշոր պաշարները, սաղմամթերքը, Մուկդենյան բանակի հանդերձանքը, անոդորումները, ինքնաթիռները, մի խոսքով Մանջուրական բանակների համարյա մեծ տեխնիկան:

Գործողության հանկարծակիություն և արագությունը չնորհիվ, ճապոնացիներին առաջին 3—4 օրվա ընթացքում տիրեցին հարավ—մանջուրական յեկաթուղու մոտ ընկած բոլոր շրջանները: Այդ բանին ողնեց այն կարևոր հանդամանքը, վոր չինական զորքերի գլխավոր մասը Չժան Սյուն Լյանի գլխավորությունով գտնվում էին Մանջուրիայի սահմաններից դուրս, հյուսիսային Չինաստանում (Պեկին—Տյանցզին շրջանում), վորն այդ ժամանակներն անցել եր Մուկդենյան խմբավորման ազդեցություն տակ:

Սեպտեմբերի վերջերին, Կորեայից տեղափոխված զորքերով ամենագամ ճապոնական զորքերը գրավեցին Գիրինը, զինաթափ անելով տե-

ղական մի քանի բրիգադներ, առաջ չարժվեցին յեկաթուղու ուղղությունով Մուլին—Գայ—Տաոնան շրջանում: Հոկտեմբերին նկատվում է ճապոնական գրավման հետագա ետապը—գա գրաված տեքիմունիայի ապահովումն և և ոկուպացիայի գոտին դեպի հյուսիս լայնացնելու պատրաստությունը: Մուկդենում, Գիրինում կազմվում են «նոր» կառավարություններ, վորոնց պլուսը ճապոնական զինվորականությունը նշանակում է ճապոնակիլ զենեքային Սի—Սյաին՝ Գիրինում, Յուն—Յզինկային, իսկ այնուհետև Յզյան—Շի—Իին Մուկդենում: Այս կառավարությունները գործում են Յապոնական գրավման զորքերի հրամանատար գեներալ Սոնդզիյի անմիջական ցուցումներով: Հենց այդ ժամանակ էլ Կորեայից և ճապոնիայից սկսեցին ժամադրվել ճապոնական նոր մասեր՝ ավիացիա, հրետադոր և այլն: Այս պարբերին անմիջական մասնակցեցին գրավման առաջին շրջանում զինաթափարած չինական զորքերի մնացորդներին ճնշմանը, վորոնք միացել էին տեղական խուսիսուղական ջոկատներին և հարավային Մանջուրիայում պարտիզանական կոմիներ էլին կազմակերպում ճապոնացիների դեմ:

Հոկտեմբերի կեսերին ճապոնացիները կազմակերպում և աջակցում են իրենց նոր հովանավորյալ զենեքայ Չժան—Պյանի (Տաոնան շրջանի պահպանության պետ) յեյուսան ընդդեմ Լա—Չժան—Շյանի, Յիցիկարի կառավարության, (այն ժամանակ Չժան—Սյուն—Լյանի կողմնակիցը) այն հաշվով, վորպեսզի գրավեն Յիցիկարը և հաստատեն այնտեղ Չժան—Պյանի: ճապոնացիներին այդ ձեռնարկումն անհաջողության և մատնվում: Նրանք ձեռնարկում են արդեն Յիցիկարը գրավելու ինքնուրույն գործողություն: Վորպես առիթ ոգտագործելով Մա—Չժան—Շյանի զորքերի կողմից Յիցիկարից դեպի հարավ Տաոնան—Անանցի յեկաթուղու Նոնի դեպի կամուրջը քանդելու փաստը, յեկաթուղի, վորը կառուցված եր ճապոնական կապիտալով, ճապոնական զորքերը նոյեմբերի սկզբներին սկսեցին հարձակում Յիցիկարի վրա: Մայի զորքերի բաժանին համառ զիմպուրությունից հետո, ճապոնական զորքերը չոյեմբերի 18—19-ին գրավեցին Յիցիկարը և գրաված են պահում այն և այժմ:

Նոյեմբերին և դեկտեմբերին ճապոնական զորքերը նոր ամրացումներ ստացան կզգիններից և ձեռնարկեցին հարավային Մանջուրիան մարելու գործողություններին Չժան—Սյուն—Լյանի զորքերից, վորոնք բռնեցին էլին Պեկին—Մուկդեն յեկաթուղին, Մուկդենից դեպի հարավ—արևմուտք: Նրանք ինչպես Յիցիկարի տակ, այնպես էլ այստեղ փորձեցին ոգտագործել տեղական զենեքային Չժան—Սյուն—Լյանի դեմ կովի համար, բայց անհաջող: ճապոնական ավիացիայի մի շարք հարձակումներից և ոմբակոծություններից հետո Յզին—Չժոու քաղաքի (Մուկդենից դեպի հարավ արևմուտք), մուկդենյան (հին) կառավարության նոր մայրաքաղաքի վրա, ճապոնական զորքերը անցյալ տարվա դեկտեմբերի վերջերին հարձակումներ գործեցին այդ քաղաքի վրա: Այստեղ ամրացված Չժան—Սյուն—Լյանի զորքեր ստիպված յեղան այս տարվա հունվարի սկզբին թողնել Յզան—Չժոուն և քաչվել դեպի Հյուսիսային Չինաստան: Բացի Յզին—Չժոուից, ճապոնական զորքերը գրավեցին նաև Շանհայդուանը՝ կարևոր ստորադաս կետը Մանջուրիայի և Չինաստանի սահմանի վրա:



Դուրս քշելով Չժան-Սյուն-լյանի գործերին Ցզան-Չժոուից, վողջ Հարավային Մանջուրիան գրաված յեղավ ճապոնական զորքերից: Ճապոնացիների ծրագրած գործողությունները դեպի Նեյքըն Մոնղոլիա (ժեխեր նահանգը) դադարեցվեց մի կողմից այդ նահանգի լեռնային շրջաններում գործողությունների դժվարությունների և մյուս կողմից ճապոնական զորքերի թիկունքում չինական պարտիզանական գործողությունների խիստ զարգացման պատճառով: Պարտիզանական այդ ջոկատները, վորոնք բաղկացած են գլխավորապես չինական կանոնավոր զորքերի և խուճուղական ջոկատների մնացորդներից, հաջողությամբ հարձակվում էին ճապոնական թիկունքի վրա, ավելում յերկաթուղիները և այլն: Կասկածից դուրս է, վոր ճապոնացիների դեպի ժեխ առաջնադարձան դադարեցումը առաջ յեկավ նաև քաղաքական պատճառներով: Հնարավոր է լուրջ ընդդիմադրություն Անդլիայի և ՀԱՄՆահանգների կողմից, վորոնք չահեր ունեն Հյուսիսային Չինաստանում:

Հունվարին ռազմական անցքերը նորից տեղափոխվում են դեպի Հյուսիս և ճապոնացիները պատրաստություններ են տեսնում գրավելու Հյուսիսային Մանջուրիայի տնտեսական և քաղաքական կարևորագույն կենտրոնը՝ Պարբին քաղաքը:

Առաջին գործողություններն սկսեցին ճապոնացիների ոգնությունը նոր կազմակերպված գիրխյան ճապոնաֆիլ կառավարության գեներալ Մի-Սյանի գործերը: Նրանք դուրս յեկան գիրխյան հին կառավարության գեմ, վորը հիմնվել էր Բինյան քաղաքում (Պարբինից դեպի արևելք): 1932 թ. հունվարի 20-ին Մի-Սյանի գործերը մոտեցան Պարբինին, բայց յետ չպրավեցին գեներալ Դին-Չաոի խարբինյան զորքերի կողմից: Դրա հետ միաժամանակ ճապոնական զորքերը (գեն. Տամոնի 2-րդ դիվիզիան) կենտրոնանում էին Չանչունի շրջանում: Ճապոնական ավիացիան կատարեց մի քանի հարձակումներ Բինյանի վրա: Հունվարի վերջին ճապոնական զորքերը գրավեցին Կուանչենցզի կայարանը (Չին-Արևելյան յերկաթուղու հարավային ճյուղի վերջին կայարանը) և սկսեցին առաջ շարժվել դեպի Պարբին: Պարբին տակ, Դին-Չաոի չինական զորքերի բախակներին համառ պաշտպանությունից հետո ճապոնացիները ջախջախեցին նրանց փետրվարի 5-ին, մասն քաղաք:

Այսպես ուրեմն, Յիցիկարի և Պարբինի գրավումով ճապոնական զրավման գոտին այժմ ընդգրկում է Մանջուրիայի բոլոր կարևորագույն կետերն ու շրջանները:

Դրավման գոտին յայնպեղնելու հետ միաժամանակ, ճապոնացիները յետնադուռն աշխատանք են տանում գրաված շրջաններում տնտեսապես և քաղաքականապես ամրապնդելու համար: Նրանք Գիրխին գրավելուն պես խոկույն ձեռնարկեցին Դիրին-Կայաներ յերկաթուղու կառուցումն ապարտելու աշխատանքին զորական սակրավոր մասերի ոգնությունը: Հարավային Մանջուրիայի համարյա բոլոր յերկաթուղիներն ու խոշորագույն բանկերը և ձեռնարկներն այժմ առնված են ճապոնական կապիտալի վերահսկողության տակ: Ճապոնական խորհրդատուների քաղաքական կազմը ցրված է բոլոր յերկաթուղային մարմիններն ու հիմնարկները: Ճապոնական ղինվորականությունը կառաքի և այլ միջոցներով իր կողմն է գրավում մուկդենյան հին խմբավորման դեկա-

վարներին ու միլիտարիստներին: Նշանակում նրանց այս կամ այն պաշտոնին և նրանց իր անխոս գործիքը դարձնում Մանջուրիայում իր դավթողական քաղաքականությունն անցկացնելու համար: Այսպես նրանք բանակցում են գեներալ Մաի հետ և հրավիրում նրան ճապոնացիների ոգնությունը ստեղծված Յիցիկարի նոր կառավարությունը դեկավարելու համար:

Մանջուրիան ճապոնական իմպերիալիզմի գաղութի վերածելը «ձևավակերպվում է» ստեղծելով Մանջուրիայում «անկախ» պետություն, ճապոնական իմպերիալիզմին հնազանդ կառավարությամբ:

Մամուլի հաղորդագրությունները գեներալ Պոզդիոն միաժամանակ բանակցություններ և վարում Ներքին Մոնղոլիայի իշխանների ներկայացուցիչների հետ ներքին Մոնղոլիայի և Ճապոնիայի միջև դաշինք կնքելու մասին: Սա ցույց է տալիս, վոր այժմ Մանջուրիայում տիրություն անող ճապոնացիներն իրենց հատուկ ուշադրություն ատարկա յեն դարձրել նաև նրան սահմանակից Ներքին Մոնղոլիայի շրջանները: Ռուս սպիտակ դժգոհականները ճապոնիայի հովանավորությամբ դիվիզիա յեն կազմակերպում՝ գրավելու համար Պորհրդային մերձծովյան շրջանը, մշակում են ճապոնական զորքերի հետ Չին-Արևելյան յերկաթուղու և Անդրբայկալի վրա հարձակվելու ծրագրերը:

Ինչ յեղակացություն կարելի յե հանել Մանջուրիայում այժմ կատարվող բոլոր դեպքերից: Այս բոլոր անցքերը նախ և առաջ պահանջում են Պորհրդային Միության բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների հատուկ ուշադրությունը: Նրանք կատարվում են մեկ Հեռավոր Արևելյան ծայրամասի սահմանների վրա: Ճապոնական զորքերի առաջ շարժումը դեպի Հյուսիսային Մանջուրիա, դեպի Չին-Արևելյան յերկաթուղու շերտը, իրական սպառնալիք է ստեղծում Պորհրդային Միության շահերի համար այդ հանապարհի վրա:

Իմպերիալիստների բոլոր հանկարծակի հարձակումները Չին-Արևելյան յերկաթուղու վրա, հատկապես 1929 թվի վերջին կոնֆլիկտը, միանգամայն պարզ ցույց են տալիս, թե ո՞ւր են ուղղված Մանջուրիայում մրցող ճապոնիայի, ՀԱՄՆահանգների և ուրիշ իմպերիալիստական յերկրների ջանքերը: Միջազգային իմպերիալիզմը, իրեն քայքայող հակասություններից, վորոնք անախրնթաց կերպով սրվել են համաշխարհային խառնադույն ճգնաժամով, յեյք և փնտռում նոր պատերազմների մեջ, առաջին հերթին Պորհրդային Միության դեմ հակահեղափոխական պատերազմի մեջ:

Ճապոնական իմպերիալիզմը չի սահմանափակվում Մանջուրիայի կարևորագույն շրջանների գրավումով: Նա իր թաթերը մեկնում է դեպի Մոնղոլիայի և դրա հետ միասին պատերազմում է Չինաստանի դեմ Ծանահայում, վորպեսպի նանկինյան փոհմակից ձեռք բերի Մանջուրիայի վիճակը տնորինելու ձեռնարկ իրավունքը:

Չինաստանը կազմալուծելու, յաժամարան անելու ճապոնական իմպերիալիզմի այդ քաղաքականությունը հավանություն և աջակցություն է գտնում Ազգերի լիգայից, Ծրանիայից, Անդլիայից և սոցիալ-ֆաշիստական ինտերնացիոնալի բոլոր առաջնորդներից: Նրան նպատում

և նաև ՀՍՄԻ-ի յերկրորդ քաղաքականությունը: Այս բոլոր դիշատիչներն ոգնելով ճապոնիային ձգտում են միացյալ նպատակի՝ անդամալուծել և ստրկացնել Չինաստանը, խեղդել չինական հեղափոխությունը: Ներքևից ոգտադործում են դրա համար իրենց վաճառված հակահեղափոխական գոմինդանը և նրա ղեկավարներ Չան-Կայ-Շիին, Սան-Սան-Մի-նին և ուրիշներին:

Միջազգային իմպերիալիզմի դիշատիչ ձգումներին Չինաստանում դիմադրում է հզոր-ծավալվող չինական հեղափոխությունը, չինական կոմունիստական կուսակցությունը ղեկավարությամբ: Նա ընդգրկել է Հաբաթային, Կենտրոնական և մասամբ Հյուսիսային Չինաստանի հսկայական շրջանները, սանդղել նրանցում Սորհրդային իշխանություն և ունի չինական պանծալի Կարմիր բանակ, վորը բաղմաթիվ անգամներ ճարդ ու փշուր է արել Գոմինդանի զորքերին:

Հակահեղափոխական Գոմինդանի և համաշխարհային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում չինական հեղափոխությունը հենվում է միջազգային պրոլետարիատի ոգնության վրա: Բողոքների, գործադուլների, հակաիմպերիալիստական ցույցերի հզոր ալիքը յերկրագնդի բոլոր անկյուններում, վերջապես ազգային և հակաիմպերիալիստական լայն վերելքը չինական ժողովրդի մեջ, այս բոլորը ոգն են ցնդեցնում ճապոնական և միջազգային իմպերիալիզմի և նրա հավատարիմ «ծառա» հակահեղափոխական Գոմինդանի ծրագրերը:

Այն բոլորի մեջ, ինչ կատարվում է այժմ Մանջուրիայում՝ հայելունման արտացոլվում է համաշխարհային կապիտալիստական տնտեսության քայքայումը, իմպերիալիստական յերկրների «ընտանիքում» ամենախորը հակասությունների աննախընթաց սրումը:

Թալանչիական, չտեսնված բռնություններով և ավերումներով յի իմպերիալիզմի քաղաքականությունը Չինաստանում, Մանջուրիայի դուռով գրավումը, պատերազմը Շանհայի Փրոնտում և Յանցզի հովտում — այս բոլորը իմպերիալիզմի դավթողական ձգտումների ու տենչերի շղթայի ոգակներն են վորը Չինաստանի կողոպուտի հաչիին յելք է փնտռում տնտեսական ամենաուժեղ ձգնաժամի, ճիրաններից դուրս դնալու համար:

Հեռավոր արևելքի ղեկավար պահանջում են մեզնից վոր մենք զգոն յինենք և անհրաժեշտ չափով պատրաստ վճռական հակահարված տալու և յետ մղելու իմպերիալիստական դիշատիչների ամեն տեսակի չար դիտափորությունները և պաշտպանելու յերկրագնդում պրոլետարիական դիկտատուրայի միակ յերկրի կենսական շահեր:

Ճապոնական և իմպերիալիստական մամուլի տարբեր պրովակացիոն հաղորդություններն այն ոգնության մասին, վոր իրը թե չինացիներն ստանում են իՍՀՄ-ից, Կարմիր բանակը Մանջուրիայի սահմանների վրա կենտրոնացնելու մասին, ճապոնական կառավրության կասկածելի բռնությանը հհարձակվելու և դաչինք կնքելու մասին մեր ուղղակի առաջարկության առթիվ և վերջապես սպիտակ դավադրականների հակախորհրդային գործունեությունը կենդանանալը Մանջուրիայում, այս բոլոր փաստերն ասում են այն մասին, վոր ճապոնական և միջազգային կապիտալիզմը, վորը չնչապառ է լինում յտրացող համաշխարհային

ձգնաժամից, հակառակ չե վորձելիթորհրդային Միությունը պատերազմի քաշելու, ոգտադործելով դրա համար ներկա դրությունը Հեռավոր արևելքում:

Մեր քաղաքականությունը յաղաղության քաղաքականություն է: Մենք կլանված ենք մեծագույն սոցիալիստական չինարարությունը և անում ենք ամեն ինչ նրա համար վորպեսզի յանգարենք իմպերիալիստական նոր հարձակումներ սոցիալիզմի հանրապետության միջազգային պրոլետարիական հեղափոխության քաղայի վրա այնուամենայնիվ յաղաղությունը յախտելու, առաջին հեգամյակի հակալական նվաճումները և յերկրորդ հեգամյակի մեծագույն պլանը ձախողելու պրովակացիաները չեն դադարեցվում:

«Հեռավոր Արևելքյան կոնֆլիկտի առաջին որերից իՍՀՄ-ն յստա չեղոքություն դիրք բռնեց: Սորհրդային յերկրի աշխատավորության համակրանքը դեպի իմպերիալիստական կեղեքման լծի տակ տառապող չին ժողովուրդը, իհարկե, անվիճելի փաստ է: Սակայն այդ համակրանքը դեպի չինական բանվորների և դյուղացիների ազատագրման պայքարը վոր մի կերպ չի յախտել չմիջամտելու այն անչեղ գեծը, վորը բնական է, բղխում էր Սորհրդային Միության յաղաղության ընդհանուր քաղաքականությունից: Մանջուրիայում տեղի ունեցող դեպքերի վերաբերմամբ Սորհրդային կառավարության բռնած այս հետեղական դերքի չնորհիվ, մեկը մյուսի հետեից վոչնչանում են, յ չիք են դառնում հակախորհրդային դրպարտիչ պրովակացիոն արտահոսությունները: Բավական է հիշել դրպարտիչ լայն կամպանիայի վիճակը այն ոգնության մասին, վոր իրը ցույց էր տրվում Սորհրդային Միության կողմից գեներալ Մային, կամպանիա, վորը մինչև վերջը մերկացվեց ամբողջ աշխարհի առաջ: Չմիջամտելու և յաղաղություն պահպանելու յորհրդային քաղաքականությունը ճանաչվեց, ընդունվեց բոլորի, նույնիսկ Սորհրդային յերկրի հակառակորդների կողմից: իՍՀՄ-ի վարած այդ քաղաքականությունը ճանաչվեց, վերջապես, ճապոնական արտաքին գործոց մինիստր Իոսիդավի բերանով, վորը ճապոնական պարլամենտում հաստատեց, թե ճապոնական կառավարությունը ընդունում է իՍՀՄ-ի կողմից լիովին չմիջամտելու փաստը»:

«Սորհրդային կառավարությունը վարել է, վարում է և կարունակել վարել յաղաղություն և Չինաստանում կատարվող անցքերին չմիջամտելու ամուր քաղաքականությունը: Բայց սա վոր մի դեպքում չի նշանակում, թե Սորհրդային Միությունը թույլ կտա ում էլ վոր լինի յախտել յորհրդային սահմանների անձեռնմխելիությունը, ներս յուժեղ նրա սահմանները և հափշտակել յորհրդային յերկրի թեկուզ ամենափոքր մասը»:

«Վոչ մի թիգ ուրիշի հող չեմք ուզում: Բայց և մեր հողից, վոչ մի վերշոկ չեմք տա վոչ վաքի»:

«Իդվեստիա» 1932 թ. մարտի 4.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

հ₂

Աշխարհագրական տեղեկություններ յերկրի մասին	3
Վարչական կառուցվածքը	17
Բնակչությունը	18
Գյուղատնտեսությունը	23
Արդյունաբերությունը	26
Մանջուրիայի ներքին դրությունը	30
Զինված ուժերը	33
Հայրենական ինտերվենցիան	38

Պետհրատի տպարան

Պատվեր № 1505, Գլավլիտ 7481 (բ), Հրատ. 1201, Տիրոժ 4000,

Հանձնված է արտադրության 3 հունիսի 1932 թ.

Ստորագրված է տպագրելու 3 հունիսի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0192481

ԳԻՆԸ 45 ԿՈՊ. (3 լ.)



Տ. ԿՈՒԼՍԿԻ
ՄԱՆՉՅՈՒՐՆԻԱ

Գոսիզատ ՍՍՐ Արմենի
Երևան—1932